ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2023 - 2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռեկտոր՝ կ.գ.թ. Ն.Սարիբեկյան

ԵՐԵՎԱՆ 2024

ԵՐԵՎԱՆ 2024

№	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	Էջ
1.	Նախաբան	3
2.	Վարչական կազմ, ամբիոնի վարիչներ	5
3.	Ընդունելություն	6
4.	Գիտական խորհրդի կազմը	7
5.	Գիտական խորհրդի գործունեությունը	8
6.	Ռեկտորատի գործունեությունը	8
7.	ԱԲՀ-ի Գիտական խորհրդին կից գործող Որակի ապահովման հանձնաժողով	9
8.	Որակի ներքին ապահովման համակարգ	10
9.	Գիտական մաս	14
10.	Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին	16
11.	Ֆակուլտետների գործունեություն	20
12.	Ուսումնական մասի գործունեություն	29
13.	Ուսումնաարտադրական պրակտիկա	35
14.	Արտաքին կապերի բաժին	41
15.	Գիտաբժշկական ուսումնական կենտրոն	48
16.	Գրադարան	49
17.	ԱԲՀ կայքէջ	51
18.	Ուսանողական խորհրդի գործունեություն	52
19.	Ուսանողական գիտական ընկերություն	54
20.	Տնտեսական մաս	58
21.	Ամփոփում	60

1.ՆԱԽԱԲԱՆ

Ավանդական բժշկության համալսարանն (այսուհետ՝ ԱԲՀ կամ Համալսարան) առաջնորդվելով ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության դրույթներով, համալսարանի կանոնադրությամբ, 2020-2025թթ. գործող ռազմավարական զարգացման ծրագրով, կառավարման և գիտական խորհուրդների, ռեկտորատի որոշումներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է կրթական համակարգի բարելավման, նյութատեխնիկական ռեսուրսների արդիականացման և կրթության որակի ապահովմանն ուղղված տարաբնույթ գործընթացներ:

Ուսումնական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացներում ԱԲՀ-ն առանձնահատուկ կարևորել է բարձրագույն կրթության ոլորտի նորագույն մարտահրավերները և դրանց արձագանքելու, շահառուների կարիքները լավագույնս բավարարելու, կրթության որակը և արդյունավետությունը էապես բարձրացնելու անհրաժեշտությունը:

2023-2024 ուստարվա ընթացքում ԱԲՀ-ն հետևողականորեն շարունակել է իր գործունեությունը մրցունակ մասնագետների պատրաստման, ՄԿԾ-երի բարելավման, համալսարանի միջազգայնացման, կառավարման գործընթացների կանոնակարգման, ֆինանսական կայունության ապահովման և այլ ուղղություններով:

Իրականացված համալիր միջոցառումների արդյունքում, ԱԲՀ-ն բարեհաջող անցավ ինտիտուցիոնալ վերահավատարմագրում:

Համալսարանի որդեգրած ուսանողակենտրոն սկզբունքը շարունակվել է գերակա լինել հատկապես ուսանողների հետ տարվող աշխատանքներում:

Ստորև նկարագրված են ԱԲՀ-ի կողմից 2023-2024 ուստարում իրականացված աշխատանքներն՝ ըստ գործունեության տարբեր ոլորտների:

ԹՎԵՐ՝ 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ԱԲՀ՝ 33, հիմնադրվել է 1991թ.

Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիր՝ **2**

Բուժական ֆակուլտետ՝ **426** ուսանող

Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ **34** ուսանող

Ուսանողներ՝ **460**

Օտարերկրյա ուսանողներ՝ **434**

Հայազգի ուսանողներ՝ **26**

Շրջանավարտներ՝ **82**

Համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր՝ **24**

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

№	Անուն, Ազգանուն	Պաշտոն
1.	Սարիբեկյան Նորիկ	Ռեկտոր /կ.գ.թ.
2.	Գյոզալյան Արայիկ	ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր /մ.գ.թ., դոցենտ
3.	Մինասյան Արսեն	Ուս. աշխատանքների գծով պրոռեկտոր /բ.գ.դ., պրոֆեսոր
4.	Կարապետյան Անահիտ	Դեկան
5.	Գրիգորյան Վահան	Գիտական մասի վարիչ/բ.գ.թ.
6.	Սարգսյան Ասյա	Ուսումնական մասի վարիչ
7.	Թարջումանյան Նվարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժ. վարիչ
8.	Հովսեփյան Մանուշակ	ՈԱ բաժնի առաջատար մասնագետ
9.	Սարգսյան Անի	Արտաքին կապերի բաժնի վարիչ
10.	Ավոյան Սուսաննա	Գլխավոր հաշվապահ
11.	Խեչումյան Սիմոն	Քաղ. պաշտպ. շտաբի պետ
12.	Մանաշյան Գոհար	Դեկանի օգնական
13.	Կիրակոսյան Գոհար	Ուսումնական մասի վարիչի օգնական
14.	Դանիելյան Նաիրա	Ուսումնական մասի վարիչի օգնական
15.	Գաբրիելյան Վարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ
16.	Հարությունյան Լուսինե	Գանձապահ-հաշվապահ
17.	Ավետյան Աննա	Գրադարանավար
18.	Վարդանյան Լիաննա	Արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ
19.	Հեղինե Գյուլնազարյան	Արտաքին կապերի բաժնի մասնագետ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉՆԵՐ

№	Ամբիոն	Ազգանուն, անուն	Գիտական աստիճան, կոչում
1	Հումանիտար առարկաների	Սիմոնյան Տաթևիկ	բանաս. գ.թ.
2	Բնագիտական առարկաների	Ջավրուշյան Հայարփի	կ.գ.թ.
3	Բժշկակենսաբանական առարկաների	Հունանյան Նաիրա	կ.գ.թ.
4	Սոցիալական բժշկության	Օվչյան Աննա	հ.գ.թ.
5	Թերապևտիկ առարկաների	Նազլուխանյան Մարո	բ.գ.թ.
6	Վիրաբուժական առարկաների	Ավագյան Էդիկ	բ.գ.թ.
8	Ստոմատոլոգիայի	Հակոբյան Հովնան	բ.գ.թ.

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանն իրականացնում է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրեր՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով.

Աղյուսակ № 1

Դասիչ	Ուսուցման ձևը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Որակավորում	Սահմանային տեղեր
Բուժական գործ 091101.00.7	Առկա	6	Հայերեն և անգլերեն	բժիշկ	120
Ստոմատոլոգիա 091201.00.7	Առկա	5	Հայերեն և անգլերեն	բժիշկ-ստոմատոլոգ	120

Համալսարանում ուսուցումն իրականացվում է միայն առկա համակարգով 2 ֆակուլտետներում՝ «Բուժական» և «Ստոմատոլոգիական»: 2023 թվականի ընդունելությունն իրականացվել է համաձայն լիցենզիայով սահմանված տեղերի, մասնավորապես.

- «Բուժական գործ» մասնագիտությամբ՝ 73 ուսանող
- «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ՝ 4 ուսանող:

Ըստ տարիների համեմատական պատկերը.

Գծապատկեր № 1



Համեմատած նախորդ տարիների ընդունելության տվյալների, հաշվետու տարում «Բուժական գործ» մասնագիտության դիմորդների թիվը 25 դիմորդով նվազել է, նվազել է նաև «Ստոմատոլոգիա» մասնագիտության դիմորդների թիվը, հաշվետու տարում ընդամենը 4 դիմորդ: Ամփոփելով ընդունելության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ համեմատած 2022-2023 ուստարվա հետ, 2023-2024 ուստարում առաջին կուրս ընդունվող ուսանողների թիվը զգալի նվազել է: 2023-2024 ուստարում Համալսարանում ՀՀ քաղաքացիների ընդունելություն ևս չի եղել՝ դիմորդների ոչ բավարար թվով պայմանավորված:

4. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ	Կ.գ.թ., ռեկտոր Սարիբեկյան Ն.Խ.
Գիտական քարտուղար	Գիտական մասի վարիչ, Գրիգորյան Վ.Ս.
Անդամներ	
Գյոզալյան Ա.Գ.	Մ.գ.թ., դոցենտ, ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր
Մինասյան Ա. Լ.	Բ.գ.դ., պրոֆեսոր, ուս. աշխատանքների գծով պրոռեկտոր
Թարջումանյան Ն.Վ.	ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ
Կարապետյան Ա.Ն.	Դեկան
Սարգսյան Ա.Հ.	Ուսումնական մասի վարիչ
Սարգսյան Ա.Ա.	Արտաքին կապերի բաժնի վարիչ
Սիմոնյան Տ.Վ.	Բանաս.գիտ.թ., «Հումանիտար առարկաների» ամբիոնի վարիչ
Ջավրուշյան Հ.Գ.	Կ.գ.թ., «Բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչ
Հունանյան Ն.Գ.	Կ.գ.թ., «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի վարիչ
Նազլուխանյան Մ.Ա.	Բ.գ.թ. «Թերապևտիկ առարկաների» ամբիոնի վարիչ
Ավագյան Է.Ս.	Բ.գ.թ. «Վիրաբուժական առարկաների N 1» ամբիոնի վարիչ
Օվչյան Ա.Ա.	Հոգ.գ.թ., «Սոցիալական բժշկության» ամբիոնի վարիչ
Հակոբյան Հ.Հ	Բ.գ.թ., «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ
Վարդանյան Վ. Յ.	ԳԲՈՒԿ-ի գլխավոր բժիշկ
Ավոյան Ս.Հ.	Գլխավոր հաշվապահ
Աղայի Է.	ՈՒԽ նախագահ, ստոմ 3-րդ կուրսի ուսանող
Ադոմահ Ս.	ՈՒԳԸ նախագահ, բուժ. ֆակ. 6-րդ կուրսի ուսանող
Զադբուկե Ռ.Պ.	Բուժ. ֆակ. 6-րդ կուրս
Նամալյան Մ.	Ստոմ. ֆակ. 3-րդ կուրս
Վարդանյան Կ.Ե.	Հոգ.գ.դ., պրոֆեսոր, արտաքին շահակից

5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի գիտական խորհուրդը համալսարանի ուսումնամեթոդական, գիտա-հետազոտական գործունեությունը պլանավորող, համակարգող կոլեգիալ մարմին է, որը 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում գումարել է 12 նիստ: Գիտական խորհրդի նիստերի նախապատրաստումը, արձանագրությունների վարումը, շահագիգիռ կողմերին որոշումներին ծանոթացնելն իրականացնում է Գիտական մասի վարիչը, որը միևնույն ժամանակ Գիտական խորհրդի քարտուղարն է:

Համառոտ ներկայացնենք Գիտական խորհրդի գործունեությունը՝

- Հաստատվել են Կառավարման խորհրդի, Գիտական խորհրդի, ռեկտորատի, ինչպես նաև հաձնաժողովների կազմերը:
- Լսվել և քննարկվել է համալսարանի ինստիտուցիոնալ վերահավատագրման փորձագիտական խմբի կողմից ներկայացված թերությունների վերացման պլան-ժամանակացույցի նախնական տարբերակը:
- Քննարկվել և հաստատվել են կազմակերպչական, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման վերաբերյալ անհրաժեշտ իրավանորմատիվային փաստաթղթերի փաթեթները:
- Հաստատվել են 2023-2024 ուստարվա գործող կրթական ծրագրերի ուսումնական պլանները:
- Քննարկվել են ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները:
- Լսվել են ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների և հանձնաժողովների ղեկավարների ըստ պլանի կատարողականները:
- Հաստատվել է համալսարանի 2023-2024 ուսումնական տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի մասնագիտությունների ընդունելության քննությունների արդյունքները:
- Գիտական խորհրդի նիստերում քննարկված հարցերի շուրջ կայացվել են համապատասխան որոշումներ:

6. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը գործում է իր կանոնակարգի համաձայն: Համալսարանի Կառավարման խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատը քննարկում, երաշխավորում և իր լիազորությունների սահմաններում որոշումներ է կայացնում Համալսարանում ուսումնական գործընթացներին առնչվող հարցերի վերաբերյալ:

Համալսարանի ռեկտորատը 2023-2024 ուստարվա ընթացքում գումարել է 30 նիստ:

1. Քննարկվել և հաստատվել է 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանը:
2. Լսվել է 2023-2024 ուստարվա ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման աշխատանքների մասին:
3. Հրավիրված նիստերն քննարկվել են ուսանողների հեռացման, ազատման և վերականգման հարցերը:

4. Լսվել են նախորդ ուստարվա ամառային քննաշրջանի լուծարքների կազմակերպման և անցկացմանհարցեր, քննարկվել են ամառային քննաշրջանի արդյունքները:
5. Լսվել են ուսանողներին կուրսից կուրս տեղափոխելու վերաբերյալ հարցեր և այլն:

7. ԱԲՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱԲՀ-ի գիտական խորհրդին կից գործող Որակի ապահովման հանձնաժողովը հաշվետու տարում նախապատրաստական աշխատանքներ է տարել ինստիտուցիոնալ վերահավատարմագրման աշխատանքների պատշաճ կազմակերպման ուղությամբ:

Առաջին հերթին ապահովել է ԱԲՀ-ի 2020-2025 թթ. ՌԶԾ-ին համապատասխան գործունեության իրականացումը. հետևել է ստորաբաժանումների աշխատանքային պլանների, դրանց համապատասխան հաշվետությունների կազմմանը, ՈԱ գործընթացների համակարգված իրականացմանը:

Հաշվետու ուստարում վերանայվել է ամբողջական գործարկվել է Որակի ներքին ապահովման քաղաքականությունը, որը վերանայվել էր նախորդ ուստարում:

Վերանայված ԱԲՀ ՈԱ ձեռնարկի գործարկումը և հետևողական կիրառումը ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպման և կառավարման պահանջներից է: ԱԲՀ-ն իր Որակի ապահովման ձեռնարկում նկարագրում է Որակի ապահովման գործ-ընթացները: Ձեռնարկը ներառում է կազմակերպական գծապատկերը, որը ցուցադրում է ՈԱ պատասխանատվությունների բաշխումը, ինչպես նաև տեղեկատվություն ՈԱ քաղաքա-կանության, գործընթացների և ընթացակարգերի մասին:

ՈԱՀ-ը հաշվետու տարում նաև համակարգել է ինստիտուցիոնալ վերահավատարմագրման աշխատանքները, կազմակերպել հանդիպում ինքնավերլուծության աշխատանքային խմբի և համալսարանի աշխատակիցների հետ:

ՈԱ հանձնաժողովի նախագահի առաջարկով ՈԱ հանձնաժողովի կազմը կարելի է ընդլայնել՝ հաշվի առնելով ընթացիկ աշխատանքների ծավալը:

8. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համալսարանի կրթության ներքին որակի ապահովման համակարգը կանոնակարգ-ված է, սահմանված են պատասխանատուների պարտականություններն ու իրավա-սությունները:

Հաշվետու ուստարում համալսարանում իրականացվել են ինստիտուցիոնալ վերահավատարմագրման գործընթացի նախապատրաստման, կազմակերպչական և անցկացման անհրաժեշտ աշխատանքներ:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի աշխատանքային պլանը բխում է ԱԲՀ 2020-2025 թթ. ռազմավարական զարգացման պլանից, պլանով նշված գործողությունները համակցված են ՌԶԾ նպատակների հետ, սահմանված գործընթացները բավական ընդգրկուն են, ներառում են ինչպես ՈԱ ուղղված գործընթացները, այնպես էլ կրթական, հետազոտական գործունեության զարգացմանը միտված ուղղությունները: Որակի ապահովման ուղղությամբ նախատեսված գործընթացներից իրականացվել են շահակիցների հետ քննարկումները, հարցումները, մշակվել և հաստատվել են ընթացակարգային ու ձևաչափային փաստաթղթերը:

Փորձագիտական զեկույցում ներկայացված բոլոր խնդիրները կարևորվել են և հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ պատասխանատուները շարունակել են ներքին շահակիցների հետ հանդիպումները տարբեր ուղղություններով՝ կարիքների վերհանում, խորհրդատվության տրամադրում, բարելավման առաջարկների քննարկում:
- Կազմակերպվել է փորձագիտական նախնական զեկույցի քննարկում, որի վերաբերյալ դիտարկումներ, անհամաձայնություններ չեն արձանագրվել:
- Կազմվել է «ԱԲՀ փորձագիտական զեկույցի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը և ժամանակացույցը»՝ ըստ հավատարմագրման 10 չափանիշների: Վերջինս նախագծային տարբերակով քննարկվել է ներքին շահակիցների շրջանում: Այն նախատեսված է 2024-2026թթ. ընկած ժամանակահատվածի համար և ընդգրկում է 10 չափանիշների վերաբերյալ փորձագետների ներկայացրած խորհրդատվությունները, որոնք դարձել են խնդիր: Մշակվել են ակնկալվող արդյունքները և դրան հասնելու համար անհրաժեշտ գործողություններն ու քայլերը: Համաձայն վերհանված խնդիրների՝ վերանայվել է համալսարանի բյուջեն՝ ըստ համապատասխան հոդվածների:
- Նախատեսվում է վերանայել բոլոր հաշվետու ստորաբաժանումների, ղեկավարների աշխատանքային պլաններով սահմանված ակնկալվող արդյունքները և կոնկրետացնել դրանց հասնելու ժամանակահատվածը:
- ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի հանձնարարությամբ, գործող ՌԶԾ-ի «Արտաքին կապեր» չափանիշի շրջանակում, Արտաքին կապերի բաժնի կողմից վերլուծվել է 2020-2023

թթ.-ի բաժնի գործունեությունը, ամփոփվել գործող պայմանագրերի և հուշագրերի արդյունավետությունը: Գիտական խորհրդի որոշմամբ՝ փորձագետների խորհրդատվության համաձայն, մշակվում է Արտաքին կապերի բաժնի նոր՝ հնգամյա ՌԾ-ի նախագիծը:

- Պլանավորվում է 2024-2025 ուստարում իրականացնել ՄՌԿ քաղաքականության մշտադիտարկում՝ ՌԶԾ սահմանված նպատակների իրականացման տեսակետից գնահատելու ՄՌԿ և ընդհանուր բաժնի կատարած աշխատանքը, հետևելու հաջողություններին ու մարտահրավերներին:
- Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունների հիմքում դնելով շահակիցների կարիքները և նպաստելով պրակտիկաների, փորձի փոխանակման գործընթացների բարելավմանը, պատրաստվել են ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի և Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետ համագործակցության հուշագրեր: Այս հարցի առնչությամբ մեծ է եղել ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի նախաձեռնությունը, ինչպես նաև մասնակցությունը հուշագրի նախագծի մշակմանը և քննարկմանը: Հաշվետու ուստարվա վերջում ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի և Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետ կնքվել է համագործակցության հուշագրեր:
- ՈԱ պատասխանատուների կողմից հրավիրվել է գործնական, լաբորատոր դասընթացների արդյունավետ կազմակերպման և անցկացման վերաբերյալ խորհրդակցություն ՊԴ կազմի հետ՝ առարկայական ծրագրերով նախատեսված գործնական, լաբորատոր պարապմունքների բարելավման վերաբերյալ առաջարկների քննարկմամբ, կրթական ծրագրերում միջառարկայական կապերի ապահովման, հանձնարարությունների լիարժեք ու հստակ արտացոլման մասին: Շեշտադրվել է վերջնարդյունք-դրան հասնելու համար նախատեսված առաջադրանք-ռեսուրս շղթայի ապահովումը:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվության համաձայն ուսումնասիրվել է Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի՝ WFME-ի կողմից առաջարկվող դասավանդման և գնահատման մեթոդները կիրառող բժշկական բուհերի փորձը: Համալսարանը նպատակահարմար է գտել հարևան երկրի՝ Վրաստանի Հանրապետության այն բժշկական համալսարանների հետ համագործակցության պայմանավորվածություն ձեռքբերել, որոնք հավատարմագրվել են WFME-ի կողմից: 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակում կազմակերպվել է գործուղում «Թբիլիսիի բժշկական ակադեմիա», կնքվել է երկկողմ համագործակցության պայմանագիր: Վերոնշյալ պայմանագրի շրջանակում հուլիսի 22-25-ը Համալսարանի 6 դասախոսներ Թբիլիսիիում մասնակցեցին VOSCE-digitalized tool for Objective Structured examination of clinical reasoning skills of medical students /Վիրտուալ ՕԿԿՔ-թվայնացված գործիք բժշկական ուսանողների օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական հմտությունների քննության համար/ թեմայով

կազմակերպած վերապատրաստմանը: Սա նշանակում է, որ Համալսարանը հետևողականորեն աշխատում է ՄԿԾ-ների բարելավման և միջազգայնացման ուղղությամբ:

- ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը և ՈԱ առաջատար մասնագետը ընդգրկվել են Թբիլիսիի Բժշկական ակադեմիա գործուղման /09.04.2024-11.04.2024թթ./ աշխատանքային խմբում: Առանձին հանդիպում են ունեցել Բժշկական ակադեմիայի ՈԱ բաժնի վարիչ՝ Նինո Սիխարուլիդձեի հետ, քննարկել ՈԱ գործընթացների վերաբերյալ մի շարք հարցեր, մասնավորապես՝ խոսել են OSPE, OSCE քննությունների ներդրմանն ու կիրառմանն առնչվող ՈԱ պատասխանատուների կողմից տարվող աշխատանքների մասին:
- ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը ներկայացրել է հաշվետվություն ԳԽ նիստին՝ Վրաստանի բժշկական ակադեմիա երկօրյա այցի վերաբերյալ: Համալսարանում կազմակերպվել են հանդիպումներ, քննարկվել գործուղման արդյունքների մանրամասները:
- Թերությունների վերացման պլան-ժամանակացույցով նախատեսված գործողություն-ների արդյունավետ իրականացման նպատակով՝ ԳԽ որոշմամբ և ռեկտորի հրամանով ձևավորվել են աշխատանքային խմբեր՝
  - ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խումբ /հր. 04.04.2024թ./:
  - Ներքին նորմատիվային փաստաթղթերի վերանայման աշխատային խումբ /հր. 04.04.2024թ./: Վերջինիս աշխատանքներին ընդգրկվել են ՈԱ պատասխանատուները: Ներկայացվել է զեկույց ԳԽ-ին արդյունքների վերաբերյալ: Նախատեսված է 2024-2025 ուստարում առաջնորդվել վերանայված պաշտոնի անձնագրերով:

Ձևավորված աշխատանքային խումբը փորձագետների առաջարկով հստակեցրել է ԱԲՀ Կառավարման խորհրդի գործառույթները և, արտաքին շահակիցների ներգրավման անհրաժեշտությունը հաշվի առնելով, մշակել Կառավարման խորհրդի աշխատակարգի նոր նախագիծ: Նախագծի հաստատումով անհրաժեշտություն կառաջանա ձևավորել Կառավարման խորհրդի նոր կազմ:

- 2022-2023 ուստարվա պրակտիկայի արդյունքների ամփոփման վերաբերյալ ԳԽ որոշման հիման վրա (արձ. 3, 06.10.2023թ.) ՈԱ առաջատար մասնագետը Կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի և դեկանի հետ համատեղ վերանայել են «ԱԲՀ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգը», որը ներառում է պրակտիկայի արդյունքների հաստատման ընթացակարգ: Միջազգային ուսանողների պրակտիկայի վերահսկողության ու գնահատման մեխանիզմները լավարկելու վերաբերյալ և պրակտիկայի բարելավման վերաբերյալ այլ խորհրդատվություններ, որոնք ներկայացվել են փորձագիտական խմբի կողմից, ներառվել են

թերությունների վերացման պլան-ժամանակացույցում, ըստ որի պատասխանատու ստորաբաժանումները պլանավորել են իրենց աշխատանքները:

- Փորձագիտական խմբի առաջարկով վերանայվել է ԳԽ-ին կից ՈԱ հանձնաժողովի կազմը, որը ղեկավարում էր ռեկտորը, որը նաև համալսարանի Գիտական խորհրդի նախագահն է: Փորձագետներն արձանագրել են նաև այն, որ Համալսարանի ընդհանուր ղեկավարումն ու գործառնական կառավարումն իրականացնում է ռեկտորը, որը հաշվետու է ԱԲՀ կառավարման բարձրագույն մարմնին՝ հիմնադիր անդամների ընդհանուր ժողովին, որտեղ ևս ռեկտորն ընդրգրկված է՝ պայմանավորված բուհի իրավակազմակերպական ձևի և գործող կառավարման համակարգի առանձնահատկություններով: Հետևաբար, վերանայվել է ՈԱ հանձնաժողովի կազմը:
- Վերլուծվել են 7 ամբիոնների կողմից ներկայացված 2023-2024 ուստարվա աշնանային կիսամյակի դասալսման արդյունքները, արվել են համապատասխան հետևություններ և ներկայացվել ԳԽ նիստին:
- ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի և ՄՌԿ և ընդհանուր բաժնի նախաձեռնությամբ մարտի 28-29-ը պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպվել է «Հոգեբանամանկավարժական մոտեցումները բժշկական հաստատությունների դասավանդողների համար» թեմայով երկօրյա վերապատրաստում «Էլ-Պի» Հոգեբանական Ուսումնախորհրդատվական կենտրոնի կողմից: Վերապատրաստմանը մասնակցել է 49 դասախոս: Պայմանավորվածություն է ձեռքբերվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, հ.գ.դ., պրոֆեսոր Կ.Վարդանյանի հետ եռափուլ վերապատրաստում կազմակերպելու համար:
- Փորձագետների խորհրդով ևս աշխատանքներ են տարվում պրեռեքվիզիթային առարկաների շրջանակում ուսանողների կարողությունների զարգացման համար նախատեսված լաբորատորիաների բարելավման ուղղությամբ: ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի հանձնարարությամբ մասնագիտական ամբիոններում իրականացվել է առկա ռեսուրսների գնահատում և առաջարկների պատրաստում: Արդյունքում մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացվել են պրեռեքվիզիթային առարկաների համար նախատեսված առաջնային անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների ցանկը: Ներկայացված ցանկի համապատասխան հաշվապահությունը միջոցներ է ձեռնարկել ձեռքբերելու անհրաժեշտ լաբորատոր սարքավորումները:
- 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակին ձեռք են բերվել լաբորատոր սարքավորումներ, սիմոլյացիոն մանիկեններ, մանրադիտակներ, որոնց համար տրամադրվել է բավականին մեծ գումար:
- Քննարկվել է համալսարանին արված բժշկական սարքավորումների, ուսումնական նյութերի, պարագաների գնման առաջարկները:

- ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը ընթացիկ ուստարում պատասխանել է մոտ 30 մտից գրությունների, որոնք մակագրվել են իրեն ԱԲՀ ռեկտորի կողմից:
- ՈԱ առաջատար մասնագետ Մ.Հովսեփյանը՝ հաշվի առնելով փորձագիտական խմբի նկատառումները կարիքների վերհանման հարցաշարերի անկատարության առումով, դասախոսների հետ վերանայել է *«Դասավանդման որակի և արդյունավետության գնահատման» և «Շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ»* հարցաշարերը: Վերջիններս փորձաշրջան են անցնել. տարբեր կուրսերի ուսանողների կողմից թղթային տարբերակով լրացվել են: Ընտրվել է առաջարկվող 2 տարբերակներից մեկը, որից հետո ուսանողների շրջանում 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի սկզբին իրականացվել է դասավանդման որակի և արդյունավետության գնահատում, ինչպես նաև շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության առցանց հարցումներ: Հարցման արդյունքները մշակվել և ներկայացվել են շահագրգիռ ստորաբաժանումներին, այնուհետև կներկայացվեն ԳԽ նիստում:

Այսպիսով, ԱԲՀ-ում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են կրթության որակի ապահովմանն ուղղված գործընթացներ, որոնք ընդգրկել են ՌՀԾ-ով սահմանված ինչպես կրթական, այնպես էլ հետազոտական գործունեության զարգացման ուղղությունները:

9. ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

Համալսարանում հաշվետու ժամանակահատվածում ուսումնական գործընթացում ներգրավված են եղել 65 մասնագետ, որոնցից 4-ը ունեն դոկտորի գիտական աստիճան, իսկ 24-ը՝ գիտությունների թեկնածուի աստիճան:

Համալսարանի դասախոսական անձնակազմի մասն ուսումնական գործընթացին զուգահեռ զբաղվում է նաև մասնագիտական և գիտական գործունեությամբ: ԱԲՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է մեկ 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակվել կամ համահեղինակվել են 23 հոդված և գրքի գլուխ, որոնց ընդհանուր թվից 20-ը՝ արտերկրում: ԱԲՀ-ի դասախոսները մասնակցել են տեղական և միջազգային գիտաժողովների, որոնցից մի քանիսում հանդես են եկել զեկույցներով և/կամ տպագրել են հոդված գիտաժողովի ամփոփիչ ձեռնարկներում: Դասախոսներից 7-ն անցել են մասնագիտական վերապատ-րաստումներ: Համալսարանական դասախոսները հաշվետու ուստարվա ընթացքում ստացել են մի շարք հետազոտական դրամաշնորհներ:

ԱԲՀ ուսանողները, ինչպես նախորդ ուսումնական տարի, հաշվետու ուստարում ևս ակտիվ գործունեություն են իրականացրել գիտահետազոտական ոլորտում, նրանցից մի քանիսը տպագրել են գիտական վերլուծական բնույթի հոդվածներ: Մեկ ուսանող ունեցել է տպագրություններ 7 հոդվածների տեսքով, ևս 2-ը՝ պաստառային զեկույցների տեսքով,

որոնցից մեկը միջազգային կոնֆերանսի մրցույթում գրավել է 3-րդ հորիզոնականը: Երկու ուսանող ներառվել է դրամաշնորհային հետազոտական նախագծերում:

Ստորև գծապատկերներով ներկայացված են հաշվետու տարվա և նախորդ 2 ուստարվա ընթացքում գիտական գործունեության վերաբերյալ համեմատական պատկերով տեղեկատվությունը:

Գծապատկեր № 2

ԱԲՀ-ի դասախոսների գիտական գործունեության համեմատական պատկերը 2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուստարիներ:



Այսպիսով, համաձայն գծապատկեր 1-ի տվյալների, կարող ենք արձանագրել, որ հաշվետու ուստարում ԱԲՀ-ի դասախոսական կազմի մասնակցությունը գիտական կոնֆերանսներին և վերապատրաստումներին նախորդ ուստարվա համեմատ ավելացել է 1-ով, սակայն 2021-2022 ուստարվա համեմատ զգալի նվազել է: Նույն պատկերն է նաև հրատարակված գիտական հոդվածների բաժնում, նախորդ տարվա համեմատ նվազել է 38%-ով:

ԱԲՀ-ի դասախոսների գիտական գործունեությունը վերջին 4 տարիների համար

Գծապատկեր № 3



Ամփոփելով գծապատկեր 2-ի տվյալները, փաստում ենք, որ հաշվետու տարում որոշ ցուցանիշներ զգալի նվազել են, այստեղից կարելի է հետևություն անել, որ գիտական մասը պետք է ուսումնասիրի և վերլուծի առկա տվյալները, որի հիման վրա անհրաժեշտ է մշակել բարելավման միջոցառումներ և ակտիվացնել աշխատանքները այս ուղղությամբ:

Գծապատկեր № 4

ԱԲՀ-ի աշխատակիցների ՀՀ և արտերկրում ունեցած գիտական հրապարակումները վերջին 4 տարիների համար և համեմատությունը:



Համեմատելով նախորդ տարիների հետ, հաշվետու ուստարում դասախոսական կազմի կողմից գիտահետազոտական հոդվածների, թեզերի և աշխատությունների հրատարակումների թիվը զգալի նվազել է: Այս ամենը պետք է լինի Գիտական մասի առաջնային խնդիրներից մեկը, որին անհրաժեշտ է շատ մեծ ուշադրություն դարձնել:

Հաշվետու տարվա ձեռքբերումներից է եղել ՈՒԳԸ-ի ակտիվացումը: 2023-2024 ուս-տարվա ընթացքում համալսարանի ուսանողները Գիտական մասի վարիչ Վ.Գրիգորյանի գլխավորությամբ մասնակցել են մի շարք գիտական կոնֆերանսների, որպես համահեղինակներ տպագրել են մի քանի գիտական հոդվածներ: ՈՒԳԸ-ի երկու ուսանողներ ընդգրկվել են դրամաշնորհային ծրագրերում:

10. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

ՄՌԿ և ընդհանուր բաժինը 2023-2024 ուսումնական տարում շարունակել է իր գործունեությունը՝ իր կանոնադրության և ԱԲՀ ներքին կանոնակարգերի համաձայն:

2023-2024 ուսումնական տարում համալսարանի աշխատողների թիվը կազմել է 94 մարդ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 7-ով:

Համալսարանի անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև (գծապատկեր 5 և 6-ում):

Գծապատկեր № 5

Պրոֆեսորադասախոսական կազմի համեմատական տվյալներ



Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 65 մարդ /որից 47-ը կին/, 4 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Համեմատելով նախորդ ուստարվա հետ, հաշվետու ուստարում պրոֆեսորադասախոսական անձնակազմը պակաս է 3-ով, սակայն կանանց թիվը ավելացել է 1-ով: Հաշվետու ուստարում 4-ով ավելացել է նաև գիտությունների թեկնածուների թիվը:

Գծապատկեր № 6

Համալսարանի վարչական անձնակազմը



Հաշվետու տարում վարչական անձնակազմը պակասել է 1 աշխատակցով:
2023-2024 ուստարվա ընթացքում կնքվել է 73 աշխատանքային պայմանագիր, 3-ով պակաս նախորդ տարվա համեմատ: Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 9-ը /պայմանագրի լուծարմամբ, որից 6-ը հիմնական աշխատող/, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 61-ը:

- 2023-2024 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է ռեկտորի համապատասխան հրաման:
- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N 1450-Ն որոշման.
  - պրոֆեսորադասախոսական կազմ՝ 42 աշխատանքային օր,
  - ռեկտոր, դեկան, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ՝ 30 աշխատանքային օր,
  - ԳԲՈՒԿ-ի աշխատակիցներ՝ 26 աշխատանքային օր,
  - վարչական, ուսումնաօժանդակ և տնտեսական մասին՝ 24 աշխատանքային օր:
- Հաստիքացուցակը կազմվել է 28.08.2024թ-ին և հաստատվել Գիտական խորհրդի նիստում:
- Համալսարանում աշխատում են տարիքային 10 թոշակառուներ: Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում: Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:
- 2023-2024 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 476-ը /01.07.2024թ-ի դրությամբ/:
- Կատարվել է հրամանների կրկնօրինակների և/կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում: Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ //ելից-1051, մտից-115/ համապատասխան գրանցամատյաններում:

Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:

- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 416 տեղեկանք /աշխատողներին՝ 46, ուսանողներին՝ 370/, բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:
- Համալսարանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքային առաջխաղացումն իրականացվում է հաշվի առնելով թեկնածուի անհատական ուղին, նրա դասախոսական և հետազոտական կարողությունները և տվյալ ոլորտում ունեցած

մասնագիտական փորձը: 2023-2024 ուստարում որպես աշխատանքային առաջխաղացում կատարվել է 5 աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում:

- ԱԲՀ-ի կրթական ծրագրերի վերանայման գործընթացում ակտիվ մասնակցություն ցուցաբերած 27 դասախոսներ ներկայացվել են դրամական խրախուսման:
- Համալսարանում գործող ներքին նորմատիվային փաստաթղթերի վերանայման աշխատանքային խմբի կողմից վերանայվել են ԱԲՀ պաշտոնի անձնագրերը:
- Հաշվետու ուստարում ԱԲՀ Էթիկայի հանձնաժողովը, որի նախագահն է ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչը, էթիկայի խախտման որևէ դեպք չի արձանագրել:
- ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի առաջարկով նախատեսվում է իրականացնել ՄՌԿ և ընդհանուր բաժնի գործունեության մշտադիտարկում:

Վերապատրաստումներ՝

- ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ն.Թարջումանյանը և ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Վարդ Գաբրիելյանը 19.02.2024թ. – 20.02.2024թ. մասնակցել են EDUX ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված ՀՀ Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ դասընթացին:
- Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը և բաժնի առաջատար մասնագետ Հեղինե Գյուլնազարյանը մասնակցել են Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENIC Armenia) 31.10.2023թ. Council of Europe-ի (ԵԽ) հովանու ներքո կազմակերպված «Կրթության շահագրգիռ կողմերին զինել կոմպետենցիաներով կեղծարարությունների բացահայտման և դրանց դեմ պայքարելու համար/DETECT» թեմայով համաժողով-դասընթացին:
- Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը և բաժնի առաջատար մասնագետ Հեղինե Գյուլնազարյանը մասնակցել են 20.06.2024թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում և Հայաստանում էրազմուս+ ազգային գրասենյակի հետ համագործակցությամբ կազմակերպված «Էրազմուս+ նախագծերի մեկնարկային օր 2024» միջոցառմանը:
- ԱԲՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի համար ՈԱ.և ԿԲ գծով պրոռեկտոր Ա.Գ.Գյոզալյանի նախաձեռնությամբ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության, մանկավարժության և քաղաքագիտության» ամբիոնի վարիչ, փորձագետ, հ.գ.թ., դոցենտ Լաուրա Պետրոսյանի կողմից ս/թ 28.03.2024-29.03.2024թ. կողմից կազմակերպվել է «Հոգեբանամանկավարժական մոտեցումները բժշկական հաստատությունների դասավանդողների համար» թեմայով վերապատ-րաստումներ: Վերապատրաստման ավարտին 49 մասնակիցներին շնորհվել է հավաստագրեր:
- Ավանդական բժշկության համալսարանի պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանի ղեկավարությամբ ձևավորվել է աշխատանքային խումբ /15 աշխատակից/, որը 09.04.2024թ.-11.04.2024թ-ը գործուղվել է Վրաստանի Հանրապետություն, քաղաք Թբիլիսի, «Թբիլիսիի բժշկական համալսարան» կնքելու համագործակցության

հուշագիր, ինչպես նաև ուսումնասիրելու Վրաստանի բժշկական բուհերի Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) կողմից հավատարմագրման հիմնական մոտեցումները, ուսումնական պլանների ինտեգրման մոտեցումները, ակտիվ ուսուցման մեթոդները:

- Համագործակցության արդյունքում ստացանք «Պետրե Շոթաձեի անվան Թբիլիսիի բժշկական ակադեմիայի» կրթական ծրագրերի ղեկավարի պաշտոնական հրավերը՝ «Վիրտուալ ՕԿԿՔ-թվայնացված գործիք բժշկական ուսանողների օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական հմտությունների քննության համար» թեմայով վերապատրաստում անցնելու համար և Ավանդական բժշկության համալսարանի «Օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական հմտությունների քննության» աշխատանքային խմբի ղեկավարի օգնական, ավագ դասախոս Էլեոնորա Մանուկյանի ղեկավարությամբ՝ «Թերապևտիկ առարկաների» ամբիոնի վարիչ բ.գ.թ. Մարո Նազլուխանյանը, դասախոսներ՝ կ.գ.թ. Հարություն Ստեփանյանը, Նինա Խլղաթյանը և Ռոզի Երեմյանը 21.07.2024թ.–26.07.2024թ. գործուղվեցին Վրաստանի Հանրապետություն, քաղաք Թբիլիսի «Պետրե Շոթաձեի անվան Թբիլիսիի բժշկական ակադեմիա»՝ մասնակցելու միջազգային վերապատրաստմանը:

Ընդհանուր առմամբ բաժնի աշխատանքները կատարվել են պատշաճ, անխափան, բարեխիղճ և ժամանակին: Բոլոր հաշվետվությունները ներկայացվել են ժամկետներում:

11. ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանը 2023-2024 ուսումնական տարում պատրաստել է **«Բուժական գործ»** և **«Ստոմատոլոգիա»** մասնագիտությունների գծով բժշկական կադրեր՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով:

2023-24 ուսումնական տարում համալսարանում սովորել են և հայազգի և օտարազգի ուսանողներ:

Համալսարանում դասավանդումն իրականացվում են հայերենով և անգլերենով:

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ուսումնական տարում դեկանատի աշխատանքները կազմակերպվել են գործող աշխատանքային պլանին համապատասխան:

2022-2023 ուսումնական տարվա համեմատ, հաշվետու տարում ավելացել է համալսարանում հայազգի սովորողների թվաքանակը՝ պայմանավորված այն հանգամանքի հետ, որ բժշկական քոլեջները բարձր գնահատականներով ավարտած թվով 19 դիմորդներ ընդունվեցին ստոմատոլոգիական ֆակուլտետի երկրորդ կուրս՝ համաձայն ԿԳՄՍ նախարարության 12.05.2023թ. թիվ 01/10.1/11160-2023 գրության:

2023-2024 ուստարում Համալսարանի ուսանողների աշխարհագրական շրջանակը հիմնականում մնացել է նույնը:

Այսպես, հաշվետու ուսումնական տարում համալսարանում սովորել են ուսանողներ Հայաստանից, Հնդկաստանից, Իրաքից, Իրանից, Գերմանիայից, Իռլանդիայից, Մեծ Բրիտանիայից, Հորդանանից, Շվեդիայից, Ուկրաինայից, Շրի Լանկայից, Ֆիլիպիններից,

հաշվետու տարում նաև՝ Վանուատեից, Գանայից, Եգիպտոսից, Սիրայից, Իտալիայից, Դուբայից:

Ինչպես նախորդ տարիներին, 2023-2024 ուստարում, ցավոք, առաջին կուրսերում հայ ուսանողների ընդունելություն չենք ունեցել: Իհարկե, եղել են մի քանիսը, սակայն ակադեմիական խումբ չի ձևավորվել, այդ իսկ պատճառով ԿԳՄՍ նախարարությունը նրանց տեղաբաշխել է այլ բժշկական բուհերում:

2023-2024 ուսումնական տարվա բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով տարեսկբին սովորել են թվով 474 /նախորդ ուստարի՝ 619/, իսկ տարեվերջին՝ 465 /նախորդ ուստարի՝ 578/ ուսանող, որից 84 ավարտած:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆՆԵՐ

«Բուժական գործ» ֆակուլտետ

Գծապատկեր № 7



«Ստոմատոլագիական» ֆակուլտետ

Գծապատկեր № 8



Համեմատելով նախորդ տարվա ընդունելության արդյունքները, երկու ֆակուլտետ-ներում նկատվում դիմորդների թվի զգալի անկում, հաշվետու ուստարում ստոմատոլոգիա մասնագիտությամբ առաջին կուրս ընդունելություն չի կատարվել:

Ուսումնասիրելով և վերլուծելով խնդիրները, կարող ենք փաստել, որ դա կապված չէ համալսարանի աշխատանքից:

Գծապատկեր № 9

ԱԲՀ-ում սովորող ուսանողների ընդհանուր թիվը



Ուսանողների համեմատական տվյալները ըստ ուստարիների

Գծապատկեր № 10



Ուսանողների շարժի համեմատական տվյալները ըստ ուստարիների

Գծապատկեր № 11



2023-2024 ուսումնական տարվա ընթացքում բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում ուսանողների շարժը ներկայացված է գծապատկեր 5-ում, որտեղ համեմատական տվյալներով ներկայացված է նաև 2022-2023 ուստարվա շարժը ևս:

Հաշվետու ուստարում ժամանակին կազմվել և ռեկտորատում հաստատվել են երկու ֆակուլտետների ուսումնական օրացույցերը, աշնանային և գարնանային կիսամյակների դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննաշրջանների, լուծարքների, պրակտիկա-ների, ակադեմիական տարբերությունների հանձնման ժամանակացույցերը: Այդ ամենը

ինչես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակով, սոցիալական տարբեր հարթակներով, համալսարանի ֆեսբուքյան էջով, ինչպես նաև համալսարանի համապատասխան ցուցափեխկերում տեղադրվելով՝ հասանելի են եղել շահակիցներին:

Հաշվետու ուստարվա ձմեռային և ամառային քննաշրջանների, լուծարքների ժամանակացույցները մինչ ռեկտորոտում հաստատելը, նախապես համաձայնեցվել են ուսանողների հետ:

2023-2024 ուսումնական տարում 2 կիսամյակների ընթացքում կայացել են համալսարանի ամբիոնների նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը տվյալ ամբիոնում, վերլուծվել են ուսանողների առաջադիմության արդյունք-ները, լուծարքների արդյունքները, վերհանվել են որոշ խնդիրներ՝ կապված պրակտիկաների, գնահատման համակարգի, ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների բարելավման և այլ հարցերի հետ:

Հաշվետու տարում դեկանի, Արտաքին կապերի բաժնի մասնագետների և կուրսերի խորհրդատուների կողմից բազմիցս կազմակերպվել են անհատական հանդիպում-զրույցներ՝ ինչպես ցածր առաջադիմություն ունեցող, բացակայող ուսանողների հետ, բացատրությունների միջոցով տարվել են համապատասխան աշխատանքներ, այնպես էլ ուսանողների միջև միջանձնային հարաբերությունների, դասախոս-ուսանող հարաբերությունների, ուսման վարձի, ուսանողի առողջական խնդիրների և այլ հարցերի հետ կապված:

Աղյուսակ № 2

2023-2024 ուստարի
«Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների
ստուգարքների և քննությունների քանակը

Ֆակուլտետ	**Ձմեռային քննաշրջան**		**Ամառային քննաշրջան**		**Տարեկան**	
	Ստուգ.	Քննութ.	Ստուգ.	Քննութ.	Ստուգ.	Քննութ.
Բուժական	33	18	26	23	56	41
Ստոմատոլ.	27	12	26	15	53	27
Ընդամենը	**60**	**30**	**52**	**38**	**109**	**68**

Հավուր պատշաճի կազմակերպվել և անցկացվել են 2023-2024 ուստարվա ձմեռային և ամառային քննաշրջանները, լուծարքները և վերահսկվել են դրանց ընթացքը: Ձմեռային քննաշրջանում բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում միասին, կազմակերպվել և անցկացվել են ստուգարքային և քննական թվով 90 առարկաներից՝ 60 ստուգարք (բուժ. 33, ստոմ. 27) և 30 քննություն (բուժ. 18, ստոմ. 12):

2023-2024 ուստարվա ամառային քննաշրջանում բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում միասին, կազմակերպվել և անցկացվել են ստուգարքային և քննական թվով 90 առարկաներից **52** ստուգարք (բուժ.26,ստոմ.26) և 38 քննություն (բուժ.23,ստոմ.15):

Աղյուսակ № 3

ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ձմեռային և ամառային քննաշրջանների առաջադիմություն (2023-2024 ուստարի)

Կուրս, խումբ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան առաջադիմություն	
	Ընդհ.առաջ.%	Որակ.առաջ.%	Ընդհ.առաջ.%	Որակ. Առաջ.%	Ընդհ. Առաջ.%	Որակ.Առաջ.%
101.	*97.7*	*73.0*	*91,0*	*68,0*	*94,4*	*71,0*
102.	*93.3*	*54,5*	*81.0*	*48,0*	*87,2*	*51,3*
103.	*83.7*	*66,2*	*81,0*	*65,8*	*82,4*	*66,0*
I	**92.0 %**	**65.0 %**	**84,0%**	**60,6%**	**88,0%**	**63,0%**
201.	*93.7*	*79.0*	*92,0*	*70,3*	*93,0*	*75,0*
202.	*88.1*	*71.5*	*86,0*	*75,0*	*87,1*	*73,3*
203.	*63.3*	*36.6*	*64,0*	*40,3*	*64,0*	*38,5*
204	*70.2*	*37.0*	*73,0*	*47,8*	*72,0*	*42.4*
II	**79.0%**	**56.0 %**	**79,0%**	**58,4%**	**79,0%**	**57,3%**
301.	*82,7*	*58.0*	*80,0*	*64,6*	*81,4*	*61,3*
302.	*75.9*	*29.0*	*73,0*	*47,4*	*74,5*	*38,2*
303.	*77.8*	*42.3*	*88,0*	*66,4*	*81,0*	*54,4*
III	**79.0 %**	**43.0 %**	**80,0%**	**59,5%**	**79,1%**	**51,3%**
401.	*97.1*	*76.2*	*91,0*	*69,5*	*94,1*	*73,1*
402.	*92.8*	*73.5*	*98,0*	*77,1*	*95,4*	*75,3*
403.	*68.1*	*35.2*	*73,0*	*42,8*	*70,6*	*39,0*
404.	*86.6*	*53.4*	*79,0*	*48,5*	*83,0*	*51,0*
IV	**86.2 %**	**60.0 %**	**85,0%**	**59,5%**	**86,1%**	**60,0%**
501.	*95.8*	*82.6*	*95,0*	*75,0*	*95,4*	*79,0*
502.	*94.2*	*79.2*	*96,0*	*80,7*	*95,0*	*80,0*
503.	*93.4*	*80.0*	*83,0*	*62,1*	*88,2*	*71,1*
504.	*96.8*	*80.0*	*83,0*	*66,9*	*90,0*	*73,5*
505.	*92.4*	*65.6*	*86,0*	*60,2*	*89,2*	*63,0*
V	**94.5 %**	**77.5 %**	**89,0%**	**69,0%**	**92,0%**	**73,3%**
601	*94.0*	*76.3*	*100*	*75,0*	*97,0*	*76,0*
602	*91.5*	*83.0*	*100*	*76,0*	*96,0*	*80,0*
603	*85.6*	*67.0*	*99,0*	*60,0*	*92.3*	*64,0*
604	*93.5*	*82.0*	*99,0*	*69,1*	*96,3*	*76,0*
605	*85.3*	*61.0*	*98,5*	*57,3*	*92,0*	*59,2*
VI	***90.0* %**	***74.0* %**	**99,2%**	**67,5%**	**95,0%**	**71,0%**
Ընդամենը	**87.0%**	***63.0* %**	***86,0*%**	***62,4*%**	***86,5*%**	***63,0*%**

- Հաշվետու տարում գիտխորհրդին են ներկայացվել ձմեռային և ամառային քննաշրջան-ների հետ կապված առաջադիմության և լուծարքների արդյունքները:
- 2023-2024 ուսումնական տարում **Բուժական ֆակուլտետում** ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 87.0%, որակականը՝ 63.0%, որոնք մի փոքր

աճել են նախորդ՝ 2022-2023 ուստարվա համեմատությամբ /ընդհանուր ***83.0*** %, իսկ որակականը՝ ***58.0 %***:

- Ձմեռային քննաշրջանում ակադեմիական պարտքերի քանակը բուժական ֆակուլտետում կազմել է.
  - 534՝ (անբավարար՝403 և չներկայացած՝131), որը նախորդ ուստարվա համեմատությամբ զգալի նվազել է՝ 690/339/351/, որից լուծարքների ժամանակ մարվել են 276-ը:
  - 2023-2024 ուսումնական տարում Բուժական ֆակուլտետում ամառային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմել է *86,0* %, իսկ որակականը՝*62,4* %, որը նույն տիրույթում է, ինչ նախորդ ուստարում:

Ակադեմիական պարտքերի քանակը ամառային քննաշրջանում կազմել է 471 (անբավարար՝ 263 և չներկայացած՝ 208), որից լուծարքների ժամանակ մարվել են 217-ը

Աղյուսակ № 4

2023-2024 ուստարի
Բուժական և Ստոմատոլոգիական ֆակուլտետների առաջադիմություն

Ֆակուլտետ	**Ձմեռային քննաշրջան**		**Ամառային քննաշրջան**		**Տարեկան առաջադիմություն**	
	Ընդ.առաջ.%	Որակ. առաջ.%	Ընդ.առաջ. %	Որակ. առաջ.%	Ընդ.առաջ. %	Որակ.առաջ. %
Բուժ.	**87.0 %**	**63.0 %**	**86,0 %**	**62,4 %**	**86,5 %**	**63,0 %**
Ստոմ.	**93.2 %**	**68.3 %**	**96,0 %**	**72,3 %**	**94,5 %**	**70,4 %**
Ընդամենը	**90,1 %**	**66,0 %**	**91,0 %**	**67,4 %**	**91,0 %**	**67,0 %**

Այսպիսով, 2023-2024 ուստարվա երկու ֆակուլտետների տարեկան ընդհանուր առաջադիմությունը կազմել է 91,0%, իսկ որակականը՝ 67,0%, որոնք նախորդ ուսումնական տարվա համեմատ մի փոքր աճել են / 88,0%, 60,5%/:

Աղյուսակ 5-ում ներկայացված է 2023-2024 ուստարվա երկու քննաշրջանների լուծարքների I և II փուլերը, որի արդյունքները.

Աղյուսակ № 5

«Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների ակադեմիական պարտքերի քանակ, արդյունքներ

Ֆակուլտետ	**Ձմեռային քննաշրջան**		**Ամառային քննաշրջան**	
	Անբավ./ Չներկ.	Հանձ./Չհանձ.	Անբավ./Չներկ.	Հանձ./Չհանձ.
Բուժական	**403/131**	**276/258**	**263/208**	**217/254**
Ստոմատոլոգիական	**30/17/**	**27/20**	**16/8/**	**8 / 16**
Ընդամենը	**433/148**	**303/278**	**279/216**	**225/270**

2023-2024 ուստարվա բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների քննաշրջանների առաջադիմության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ այս ուսումնական տարում ևս, ինչպես նախորդ ուստարում, համեմատաբար ցածր է և պետք է բարելավել՝ «Մարդու անատոմիա», «Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն», «Նորմալ ֆիզիոլոգիա», «Տեղագրական անատոմիա» դասընթացների դասավանդման դրվածքը:

2023-2024 ուսումնական տարում համաձայն ժամանակացույցի կազմակերպվել են անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորումները:

Հաշվետու տարում համալսարանն ունեցել է շուրջ 82 շրջանավարտ՝

❖ «Բուժական գործ»՝ մասնագիտություն՝ 77 +2 նախորդ տարվա շրջանավարտ,

❖ «Ստոմատոլոգիա» մասնագիտություն՝ 3:

2023-2024 ուստարում **«Բուժական գործ»** մասնագիտության ամփոփիչ ատեստավորումներին թույլատրվել էին մասնակցելու թվով 81 ուսանողներ, սակայն, որպես շրջանավարտ, ավարտեցին 77-ը, ևս նախորդ տարվա 2 ուսանող:

Գծապատկերներ 12-ում ներկայացված է 2022-2023 և 2023-2024 ուստարիների **«Բուժական գործ»** մասնագիտության ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների համեմատական տվյալները՝

Գծապատկեր № 12

«Բուժական գործ» ֆակուլտետ



Գծապատկերներ 13-ում ներկայացված է 2022-2023 և 2023-2024 ուստարիների **«Ստոմատոլոգիա»** մասնագիտության ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների համեմատական տվյալները՝

Գծապատկեր № 13

«Ստոմատոլոգիա» ֆակուլտետ





Ամփոփելով 2023-2024 ուստարվա ամփոփիչ ատեստավորման առաջադիմության արդյունքներն՝ արձանագրվեց, որ ընդհանուր առմամբ հանձնաժողովները գոհ էին ուսանողների գիտելիքներից:

Բուժական ֆակուլտետի ավարտական ամփոփիչ ատեստավորումների որակական առաջադիմությունը նախորդ՝ 2022-2023 ուստարվա (59,4%) համեմատ աննշան աճել է, կազմելով՝ 61,46%:

Այս ուսումնական տարում ևս, ինչպես նախորդում, համեմատաբար բարձր են եղել «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» (60,4%) և «Վիրաբուժական հիվանդություններ» (72.0 %) առարկաների որակական առաջադիմության արդյունքները:

2022-2023 ուստարվա համեմատությամբ ստոմատոլոգիական ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը նույնն է՝ **100**%, իսկ որակական առաջադիմությունը անհամեմատ աճել է՝ **100**% (նախորդ ուստարի՝ 68,8%): Ամփոփիչ ատեստավորման քննական 3 առարկաների արդյունքները շատ բարձր են եղել:

Աղյուսակ 4-ում ներկայացվում է 2023-2024 ուստարվա **«Բուժական գործ»** և **«Ստոմատոլոգիա»** մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման արդյունքները՝

Աղյուսակ № 6

«Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների
ամփոփիչ ատեստավորման առաջադիմության համեմատական պատկերը

N		2022-2023		2023-2024	
Ֆակուլտետ		**Ընդ.առաջ. %**	**Որակ.առաջ. %**	**Ընդ.առաջ. %**	**Որակ.առաջ. %**
1.	Բուժական	**95,1 %**	**59,5 %**	**97.4 %**	**61.4 %**
2.	Ստոմատոլոգիական	***100* %**	**69,0 %**	**100 %**	**100 %**
Ընդ.		**97,6 %**	**64,3 %**	**98.7%**	**80.7%**

Այսպիսով, 2022-2023 ուստարվա համեմատությամբ, 2023-2024 ուստարվա **Բուժական և Ստոմատոլոգիական** ֆակուլտետների ավարտական ամփոփիչ ատեստավորումների ընդհանուր և որակական առաջադիմությունները համեմատաբար աճել են 98.7% և 80.7%, նախորդ ուստարի՝ 97,6 % / 64,3 %:

Երկու ֆակուլտետների ուսումնական պլաններով նախատեսված 2023-2024 ուստարվա պրակտիկաները իրականացվել են հաստատված ժամանակացույցերին համապատասխան, ուսանողները հանձնել են ստուգարքը:

Կազմակերպվել են նաև նոր ընդունված/տեղափոխված ուսանողների տարբերություն հանդիսացող ուսումնաարտադրական պրակտիկաները:

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ունեցել ենք այլ բժշկական բուհերից, բժշկական քոլեջներից բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների տարբեր կուրսեր ընդունված կամ տեղափոխված թվով 60 ուսանողներ (բուժական՝ 41, ստոմատոլոգիական՝ 19), որոնց մեջ են մտնում նաև Բուժական ֆակուլտետի երկրորդ կուրս տեղափոխված Դուբայի “Success Point” համալսարանի առաջին կուրսն ավարտած ուսանողները, որոնք առարկայական տարբերություններ չեն ունեցել:

Հաշվետու ուստարվա ընթացքում դեկանատը ակտիվ մասնակցել է նաև.

- Համալսարանի պատվիրակությունը 11.04-14.04.2024թ.ը գործուղվեց Վրաստանի Հանրապետության՝ Թբիլիսիի բժշկական ակադեմիա, որի հիմնական նպատակն էր՝ ընդլայնել համալսարանի միջազգային կապերը համալսարանական և ծրագրային մակարդակներում, ՄԿԾ-ի միջազգայնացման, փորձի փոխանակման գործընթաց-ներում, ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդա-տվության համաձայն ուսումնասիրել Բժշկական կրթության համաշխարհային ֆեդե-ռացիայի՝ WFME-ի կողմից առաջարկվող դասավանդման և գնահատման մեթոդները (OSPE, OSCE, Bedside Teaching, CBL, PBL) կիրառող բժշկական բուհերի փորձը՝ գնահատման համար և դարձնել կիրառելի նաև ԱԲՀ-ում:
- Մասնակցություն մարզամշակութային միջոցառումների կազմակերպմանը:
- Համալսարանի ուսանողների մերձեցման երեկոին: Շախմատի մրցաշար,
- Այցելություն պատմամշակութային վայրեր, Եղեռնի հուշահամալիր և այլն:

12. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2023-2024 ուսումնական տարում համալսարանի ուսումնական մասը իր աշխատանքներն իրականացրել է համաձայն իր աշխատանքային պլանի, որի արդյունքում.

- Ժամանակին ամփոփվել և պատրաստվել են ուսանողների ըստ կուրսերի և խմբերի ցուցակները, ուսումնական մատյանները, ամբիոնների դասաբաշխումը, ուսումնական աշխատանքների ծավալը, օրացույցային-թեմատիկ պլանները, խորհրդատվությունների մատյանները և այլ ձևաթղթեր:
- Ժամանակին պատրաստ են եղել երկու ֆակուլտետների 2023-2024 ուստարվա ուսումնական օրացույցները, ուսումնական դասացուցակները, միջանկյալ ստուգումների, տարբերությունների, քննությունների, լուծարքների և պրակտիկաների ժամանակացույցները: Թղթային և էլեկտրոնային տարբերակներով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրվել են ուսումնական ստորաբաժանումներին (ամբիոններին):
- 2023-2024 ուստարում վարձակալման պայմանագիր է կնքվել «Արեգակ» ստոմատոլոգիական կենտրոնի հետ: Նշված կենտրոնից հրավիրվել է նոր դասախոս «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Դիմածնոտային ստոմատոլոգիա» առարկաները դասավանդելու համար:

Հաշվետու տարում ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան գրությունների համաձայն, համալսարանում կազմակերպված օտարերկրյա քաղաքացիների ընդունելության քննություններ արդյունքների հիմնան վրա I կուրս ընդհանուր ընդունվել են 77 ուսանող, որի թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է: Դիմորդների մեծ թիվը կազմում է Հնդկաստանի Հանրապետությունից: Դիմորդների թվում են եղեն նաև Հորդանանից, Ֆիլիպիններից, Սիրիայից և Իրանից:

- 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ունեցել ենք նաև այլ բժշկական բուհերից օտարազգի դիմորդներ բուժական ֆակուլտետ տարբեր կուրսեր տեղափոխված (ընդունված) 44 ուսանողներ:
- 2023-2024 ուսումնական տարում ունեցել ենք ստոմատոլոգիական ֆակուլտետում հայ ուսանողներից ձևավորված II կուրսի մեկ խումբ՝ 19 ուսանող, որոնք դիմել են ուսումը ԱԲՀ-ում շարունակելու նպատակով և ներկայացրել են բժշկական միջին մասնագիտական ուսումնական հաստատության համապատասխան դիպլոմներ լավ և գերազանց առաջադիմությամբ:

Ցավոք բուժական ֆակուլտետի II կուրս 2023-20024 ուսումնական տարում չձևավորվեց:

- Կազմվել են բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների բոլոր կուրսերի ուսանողների ցուցակներրը, ուսումնական խմբերը, ըստ որի ունեցել ենք բուժական ֆակուլտետում 24 ուսումնական խումբ, ստոմատոլոգիական ֆակուլտետում 6 ուսումնական խումբ, որից 2 խումբ հայ ազգի ուսանողներ, մնացացը օտարազգիների:

2023-2024 ուսումնական տարում, որոշ առարկաների դասավանդելու համար, հրավիրել ենք նոր դասախոսներ՝

1. «Դեղաբանություն», «Կլինիկական դեղաբանություն»՝ Երեմյան Ռոզի
2. «Կենսաքիմիա»՝ կ.գ.թ.,Ավթանդիլյան Նիկոլայ
3. «Վիրաբուժական հիվանդություններ »՝ Թադևոսյան Արա
4. «Մանկաբարձություն և գինեկոլոգիա»՝ Աղաջանյան Հայկուհիուրսո
5. «Սեկցիոն կուրս», «Դատական բժշկություն»՝ Սարգսյան Գոռ

- Հաշվետու ուստարվա երկու կիսամյակների ընթացքում բոլոր կուրսերում, համապատասխան կուրսի խորհրդատուի, դեկանի, ուսանողական խորհրդի նախագահի հետ միասին բոլոր կուրսերում անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ֆակուլտետների կուրսերի առաջադիմությունը, հաճախումների վիճակը, կազմակերպչական այլ հարցեր:
- Արտաքին կապերի բաժնի հետ համատեղ կազմնակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց հավելվածների տպագրման աշխատանքները և շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը:
- Բուժական ֆակուլտետի ավարտական VI կուրսում 5 խումբ լինելու պատճառով, 2023-2024 ուսումնական տարում ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունավետ և ժամանակի խնայման նպատակով հրավիրվել էին 2 նախագան 2 հոսքի համար:
- Հաշվետու տարում բուհն ավարտել են՝ 82 շրջանավարտ՝ «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով՝ 3 շրջանավարտ, «Բուժական գործ» մասնագիտության անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով՝ 77+2 շրջանավարտ:

Բացարձակ գերազանցությամբ բուհն ավարտել է «Բուժական գործ» մասնագիտության 11 շրջանավարտ: Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:

2023-2024 ուստարում Համալսարանում միավորել է «Վիրաբուժական առարկաների թիվ 1» և «Վիրաբուժական առարկաների թիվ 2» ամբիոնները և գործել են ընդհանուր 7 ամբիոններ, որոնք համալրված են համապատասխան դասախոսներով՝

1) Հումանիտար, 2) Բնագիտական, 3) Բժշկակենսաբանական, 4) Թերապևտիկ, 5) Վիրաբուժական, 6) Սոցիալական բժշկության և 7) Ստոմատոլոգիա առարկաների:

Տարվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմում 91,7%, իսկ որակական առաջադիմությունը՝ 64,6%: Ընդհանուր առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Ստոմաատոլոգիայի» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում: Որակական առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Ստոմատոլոգիայի» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Բնագիտական առարկաների» ամբիոնում: Ընդհանուր պատկերը ներկայացված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ № 7

N	Ամբիոն	Աշնանային կիսամյակ		Գարնանային կիսամյակ		Տարեկան առաջ.	
		Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.
1	Հումանիտար առարկաների	94,75	68,88	91,2	74	94,2	58,79
2	Բնագիտական առարկաների	90,6	52,5	91,6	62,8	91,1	57,6
3	Բժշկակենսաբանական առարկաների	82,9	57,2	79,5	52,9	82,5	58,2
4	Սոցիալական բժշկության	93,6	55,3	95,1	71,3	94,4	63,3
5	Թերապևտիկ առարկաների	83,7	65,7	95,25	74,6	89,4	70,2
6	Վիրաբուժական առարկաների	91,7	65,6	92,4	74	92	70
7	Ստոմատոլոգիայի	98,35	75,9	98,3	71,9	98,3	73,9
ԸՆԴԱՄԵՆԸ		***90,8***	***63,0***	***92,0***	***68,8***	***91,7***	***64,6***

Գծապատկերներ 14-ում և 14.1-ում ներկայացված են Համալսարանի 8 ամբիոնների տարեկան ընդհանուր առաջադիմության համեմատական վերլուծական տվյալները նախորդ տարվա համեմատ:

Գծապատկեր № 14



Գծապատկեր № 14.1



Ըստ գծապատկեր 14-ի և 14.1-ի, որտեղ ներկայացված են 7 ամբիոնների 3 տարվա տարեկան ընդհանուր առաջադիմությունը, ըստ որի՝ Հումանիտար առարկաների ամբիոնը 4%-ով բարելավել է ընդհանուր առաջադիմության ցուցանիշը: Բնագիտական առարկաների և Բժշկակենսաբանական առարկաների ամբիոնները հաշվետու տարում գրանցել են որոշակի առաջխաղացում, մոտ 15%-ի չափով բարելավում: Թերապևտիկ առարկաների ամբիոնի մոտ հաշվետու տարում նկատվում է զգալի բարելավում՝ նախորդ տարվա համեմատությամբ, կազմելով 62%: Ստոմատոլոգիայի ամբիոնում ևս նկատվել է որոշակի բարելավում, մոտ 5%:

Գծապատկերներ 15-ում և 15.1-ում ներկայացված են Համալսարանի 7 ամբիոնների տարեկան որակական առաջադիմության համեմատական վերլուծական տվյալները նախորդ 2 տարվա համեմատ:

Գծապատկեր № 15



Գծապատկեր № 15.1



Ըստ գծապատկեր 15-ի և 15.1-ի, որտեղ ներկայացված է 7 ամբիոնների 3 տարվա տարեկան որակական առաջադիմությունը, պարզ է, որ Թերապևտիկ, Ստոմատոլոգիայի, Բնագիտական և Բժշկակենսաբանական առարկաների ամբիոններում մոտ 10%-ով նկատվում որոշակի բարելավում: Ի տարբերություն նախորդ տարվա, Սոցիալբժշկության ամբիոնում նպատվել է մոտ 6%-ի անկում:

Այսպիսով, ըստ ամբիոնների կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունների վերլուծության, հաշվետու ուստարում որակական առաջադիմության նման ցուցանիշը պայմանավորված է 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում ուսանողների մեծ ներհոսքով, որն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի համաձայն՝ Սուրբ Թերեզա բժշկական համալսարանի լուծարմամբ պայմանավորված:

2023-2024 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության կատարողականի ցուցանիշները

Աղյուսակ № 8

Հ/հ	Ամբիոն	Պլան	Կատարողական	Շեղում
1.	Հումանիտար առարկաների	1679	1524	-155
2.	Բնագիտական առարկաների	2651	2487	-164
3.	Բժշկակենսաբանական առարկաների	6483	6107	-376
4.	Թերապևտիկ առարկաների	8442	8331	-111
5.	Վիրաբուժական առարկաների թիվ	6650	6091	-559
6.	Սոցիալական բժշկության	2638	2576	-62
7.	Ստոմատոլոգիայի	3721	3320	-401
Ընդամենը		**32 264**	**30 436**	**-1828**

Ամբողջ տարվա ընթացքում վերահսկվել են համալսարանական ամբիոնների ուսումնական պարապմունքներն ու գործունեությունը:

2023-2024 ուսումնական տարում բոլոր 7 ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է տարվա սկզբին **37 882** ժամ, որը նվազել է նախորդ տարվա համեմատ:

Կազմակերպել և ստուգվել են 2023-2024 ուստարվա համալսարանի 7 ամբիոնների տարեկան դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունների հաշվարկները, որոնք ամփոփ ներկայացված է աղյուսակ 2-ում:

2023-2024 ուսումնական տարում 7 ամբիոնների ուսումնական ընդհանուր ծանրաբեռնվածությունը ըստ պլանի կազմել է 32264 ժամ, տարեվերջում, ըստ ներկայացված կատարողականների կատարվել է՝ 30436 ժամը: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում չի կատարվել 1828 ժամ բեռնվածություն:

Ուսումնական ծանրաբեռնվածության կատարողականի ցուցանիշների շեղումների 2 տարվա համեմատական պատկերը

Գծապատկեր № 16



Ի տարբերություն նախորդ՝ 2022-2023 ուստարվա, 7 ամբիոններից միայն Սոցիալ բժշկության առարկաների ամբիոնն է, որն ունի 62 ժամ չկատարված ժամեր, որի բացատրությունը կարող է լինել տարվա կտրվածքով ոչ աշխատանքային օրերը:

Համաձայն ամբիոնների կողմից ներկայացված կատարողականների, ամենա վատ ցուցանիշը Վիրաբուժական առարկաների ամբիոնում է՝ 559 չկատարված ժամ:

Ինչ վերաբերում է հաշվետու ուստարվա ընթացքում ընդհանուր 1828 ժամ բեռնվածություն շեղումները, ապա դրանք պայմանավորված են հետևյալ պատճառներով.

- տոնական օրերի առկայություն,
- խորհրդատվություններին հատկացված ոչ բոլոր ժամերի կատարում,

- ուսումնական պլանով նախատեսված ուսումնաարտադրական պրակտիկաների ոչ լիարժեք կատարումը, քանի որ որոշ կուրսեր իրենց նախատեսված պրակտիկաները անցկացրել են իրենց երկրներում:

Ուսումնական մասը տարվա ընթացքում մասնակցել է ամբիոնների, ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերին, դասալսումներին, տարբեր մշակույթային միջոցառումներին:

Այսպիսով, ամփոփելով ուսումնական մասի 2023-2024 ուստարվա կատարողականը, կարելի է փաստել, որ սահմանված ժամկետներում ամբողջությամբ և անթերի կատարվել են բոլոր պլանավորված գործողությունները, համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է գործող ուսումնական պլաններով ճշգրտված ծանրաբեռնվածությունների, առարկայական ծրագրերի բովանդակությանը և օրացուցային պլաններին համապատասխան:

Հաշվետու տարում մասնակի ավելացել է նաև ուսումնական մասի աշխատանքային ծավալը, որը կապված է եղել ուսանողների ներհոսքով, ուսումնական խմբերի և դասախոսների թվի ավելացմամբ: Ուսումնական խմբերի ավելացման պատճառով կլինիկական առարկաների գործնական պարապմունքները ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ համալրվել է նաև դասախոսական կազմը: Հաշվետու ուստարում ձևավորվել են նաև II կուրսում հայկական խմբեր:

13. ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

1. **Ամբիոնների և ուսումնական մասի նախապատրաստական աշխատանքները պրակտիկայի կազմակերպման ուղղությամբ:** ԱԲՀ-ի 2023-2024 ուստարվա ուսումնա-արտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման նպատակով ուսումնական մասի և կլինիկական ամբիոնների վարիչների հետ համատեղ իրականացվել են հերթական կազմակերպչական աշխատանքներ, մասնավորապես՝ նշանակվել են պրակտիկայի ղեկավարներ՝ ըստ առարկաների և կուրսերի, կազմվել է պրակտիկայի ժամանակացույցը:

Պրակտիկայի անցկացման կլինիկական բազաները վերընտրվել են մասնագիտական ուղղվածությանը համապատասխան՝ համալսարանի հետ կնքված երկկողմանի պայմանա-գրերի հիման վրա:

Համաձայն ԱԲՀ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգի և ներկայացրած դիմումների՝ ուսանողների 45%-ը պրակտիկան անցկացրել է իրենց կողմից ընտրված ոչ համալսարանական կլինիկական բազաներում /ՀՀ և արտերկիր/՝ նախապես համաձայնեցնելով պրակտիկայի ղեկավարի հետ:

Պրակտիկան անցկացնելուց առաջ հանդիպումներ են կազմակերպվել պրակտիկաների անցկացման ղեկավարների և ուսանողների հետ, տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների և պարտականությունների, պրակտիկայի անցկացմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ:

2. **Պրակտիկայի ժամանակացույցի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի հաշվետվության հավելված 1-ում և 1.1-ում:**
3. **Տեղեկություններ պրակտիկայի ծրագրերի կատարման վերաբերյալ:** 2023-2024 ուստարվա ուսումնաարտադրական պրակտիկան ԱԲՀ-ի Բուժական և Ստոմատոլոգիական ֆակուլտետներում կազմակերպվել և անցկացվել է ռեկտորատի նիստով հաստատված ժամանակացույցի և պրակտիկայի ծրագրերի համաձայն: Հաշվետու ժամանակահատվածում տարբեր կուրսերում պրակտիկան անցկացվել է 12 ղեկավարի կողմից, որոնց ներկայացրած հաշվետվություններն ամփոփվել են կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի կողմից:
   - **Բուժական ֆակուլտետի** պրակտիկաների ընթացքում ուսանողները ծանոթացել են բուժկանխարգելիչ հիմնարկի աշխատանքներին, բուժքրոջ իրավունքներին և պարտականություններին, բուժքույրական միջամտությունների անցկացման պրակտիկ հմտություններին, հիվանդի խնամքի առանձնահատկություններին տարբեր հիվանդությունների դեպքում, դեղորայքի դուրսգրման, ստացման, պահպանման և բաժանման կանոններին, բուժքույրական միջամտությունների անցկացմանը՝ համաձայն նշանակման թերթիկների, անհետաձգելի վիճակների ախտորոշման և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություններին: Քննարկվել են նաև բժշկական էթիկայի և դեոնտոլոգիայի հիմնական սկզբունքները՝ բուժքույր-հիվանդ, բուժքույր-բժիշկ փոխհարաբերությունները, շեշտադրում է կատարվել բուժաշխատողի արտաքին տեսքի ու բարոյական կերպարի կարևորության վրա: Պրակտիկանտները ծանոթացել են բուժհիմնարկում անցկացվող կանխարգելիչ աշխատանքներին, ձեռք են բերել ենթամաշկային, միջմկանային և ներերակային ներարկումների հմտություններ: Պրակտիկայի ընթացքում պրակտիկանտները մասնակցել են համայցերին, անամնեստիկ տվյալների հավաքմանը, ախտորոշման և բուժման պլանի մշակմանը, ինչպես նաև լաբորատոր և գործիքային հետազոտությունների արդյունքների վերծանմանը: Պրակտիկայի հիմնական նպատակն է եղել տեսական գիտելիքների ամրապնդումը, բարելավումը և կիրառումը գործնականում, կլինիկական մտածելակերպի ձևավորումը:
   - **Ստոմատոլոգիական ֆակուլտետում** պրակտիկայի ընթացքում պրակտիկանտները ծանոթացել են ստոմատոլոգիական բժշկական հիմնարկի կառուցվածքին և աշխատանքի կազմակերպմանը, ընդունարանի, ախտահանիչ կաբինետի և ատամնատեխնիկական լաբորատորիայի աշխատանքին, բժշկական փաստաթղթերի լրացման կանոններին, բուժքույրական միջամտությունների անցկացման պրակտիկ հմտություններին: Ուսանողներն, ըստ կուրսերի, ծանոթացել են թերապևտ-ստոմատոլոգի, վիրաբույժ-ստոմատոլոգի, օրթոպեդ-ստոմատոլոգի

աշխատանքին, ամրապնդվել են նրանց գործնական հմտությունները և ձեռքբերվել նորը:

Այսպիսով, պրակտիկան նպաստել է ուսանողների ստացած տեսական գիտելիքների ամրապնդմանը, բարելավմանը և օգտագործմանը կլինիկական պրակտիկայում, գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Պրակտիկայի ընթացքում առնչվել ենք հետևյալ խնդիրներին՝

- օտարերկրյա ուսանողների հաղորդակցման դժվարությունը բուժհաստատության աշխատակիցների և հիվանդների հետ՝ պայմանավորված լեզվի անբավարար իմացությամբ: Այս խնդիրը «Հայոց լեզու» առարկա դասավանդողների ուշադրության կենտրոնում է, սակայն ակնհայտ բարելավում դեռ չի նկատվել,
- արտերկրում պրակտիկա անցնող ուսանողների վերահսկումը, քանի որ այս ուսանողների հետ կապն իրականացվում է միայն էլեկտրոնային փոստի միջոցով: Խնդիրը որոշակի չափով լուծում է ստացել, քանի որ պարտադիր է դարձել պրատիկայի ընթացքում արված լուսանկարների առկայությունը թղթապանակում, ինչպես նաև պրակտիկայի նկատմամբ ուսանողների պատասխանատվությունը բաձրացնելու նպատակով նշանկվել են պրակտիկայի պաշտպանության օրեր: Վերջինիս ժամանակ ուսանողն անցած պրակտիկան ներկայացնում է սահիկաշարի տեսքով:
- ուսանողների մեծ թիվը խմբերում,
- սիմուլյացիոն պարապմունքների և մանեկենների պակասը:

4. **Պրակտիկանտների աշխատանքի բնութագիրը:** Ամփոփելով պրակտիկանտների լրացրած թղթապանակները՝ նկատվել է հետաքրքրության աճ թղթապանակի լրացման հարցում, ինչը կարող է պայմանավորված լինել թղթապանակի լրամշակված տարբերակի կիրառմամբ, հատկապես թղթապանակում պրակտիկայի վայրից լուսանկարների պարտադիր լինելը և պրակտիկան ներկայացնելու համար սահիկաշարի պատրաստելը:

Ուսանողները, որպես պրակտիկայի **ուժեղ կողմեր,** նշել են՝

- կլինիկական գիտելիքների ձեռքբերումը,
- տարբեր բժշկական միջամտությունների հմտությունների ձեռքբերումը,
- աշխատանքը տարբեր մասնագետների հետ:

Թույլ կողմեր

- լեզվական արգելք,
- պրակտիկայի ոչ բավարար տևողություն,
- մանեկենների և սիմուլյացիոն պարապմունքների սակավությունը:

Հնարավորություններ՝

- ինքնակատարելագործում,
- տեսական գիտելիքների շարունակական բարելավում և ամրապնդում,
- կլինիկական մտածելակերպի ձևավորում և տեսական գիտելիքների կիրառում:

Ընդհանուր առմամբ, սպասելիքները պրակտիկանտների կողմից գնահատվել են որպես բավարար:

5. **Պրակտիկայի գնահատականները ներկայացված են կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի հաշվետվության հավելված 2-ում, հավելված 2.1-ում և հավելված 2.2-ում:**
6. **Պրակտիկայի առաջադիմությունը՝ արտահայտված տոկոսներով, ներկայացված է կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի հաշվետվության հավելված 3-ում և հավելված 3.1-ում:**
7. **Պրակտիկայի ղեկավարների ուժեղ և թույլ կողմերը.**
   - Պրակտիկան ղեկավարել են փորձառու մասնագետները:
   - Պրակտիկան անցկացնող բժիշկների ծանրաբեռնվածությունը մեծ է:
   - Դժվարանում են լրացնել պրակտիկայի թղթապանակները զբաղվածության պատճառով:
   - Թղթապանակում առկա ոչ բոլոր առաջադրանքներն է հնարավոր իրականացնել:
8. **Պրակտիկայի ղեկավարի առաջարկները պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավման վերաբերյալ հետևյալն են՝**
   - Պակասեցնել ուսանողների թիվը խմբերում,
   - 2023-2024 ուստարվանից ուսումնաարտադրական պրակտիկայի մատենավարումն իրականացվել է լրամշակված թղթապանակով՝
   - պրակտիկայի թղթապանակի Բուժական գործ «Անհատական աշխատանքի օրագիր» բաժնում ավելացվել են հաճախումների, ընթացիկ և վերջնական գնահատականի սյուներ և տողեր,
   - թղթապանակում պարզեցվել են գնահատման սանդղակները և փակցվել վերջում՝ դասախոսի կողմից գնահատումը հեշտացնելու համար,
   - արտերկրում պրակտիկա անցած ուսանողները պարտավոր են ներկայացնել այն սահիկաշարի տեսքով, վերջինիս նպատակն է բարձրացնել պատասխանատվությունը պրակտիկայի նկատմամբ:

Հիմք ընդունելով ԱԲՀ ռեկտորատի 08.05.2024թ-ի թիվ 24 արձանագրության որոշումը՝ «Ստոմատոլոգիա» և «Բուժական գործ» մասնագիտությունների հերթական ուսումնա-արտադրական պրակտիկաները՝ ստոմատոլոգիական ֆակուլտետի 2-րդից 5-րդ կուրսերի և բուժական ֆակուլտետի 2-րդից 5-րդ կուրսերի համար կազմակերպվել և անցկացվել են 11.01-24.01.2024թ. և 25.05-19.06.2024թ. ժամկետներում:

«Ստոմատոլոգիա» մասնագիտության հերթական ուսումնաարտադրական պրակտիկաները կազմակերպվել են ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում և «Արեգակ» ԲԿ-ում հետևյալ ձևով՝

II կուրսում «Բուժքրոջ օգնական» պրակտիկան ղեկավարել են Դ.Անսարին (201 խումբ՝ 5 օտարերկրյա ուսանող) և Ք.Սարգսյանը (202 խումբ՝ 13 հայ ուսանողը), պրակտիկայի ավարտին 21 ուսանող հանձնել է ստուգարքը հետևյալ վերջնարդյունքներով՝ 201 խմբում՝ 5 գեր., 202 խմբում՝ 3 գեր., 9 լավ, 1 բավ.:

III կուրսում «Թերապևտ-ստոմատոլոգի օգնական» պրակտիկան ղեկավարել է Ա. Զեյնալյանը (301 խումբ՝ 5 օտարերկրյա ուսանող) և Լ. Բարսեղյանը (302 խումբ՝ 4 հայ ուսանողը), պրակտիկայի ավարտին 9 ուսանող հանձնել է ստուգարքը՝ 9 գեր.:

IV կուրսում «Վիրաբույժ-ստոմատոլոգի օգնական» պրակտիկան ղեկավարել է Հ. Մելքոնյանը: Պրակտիկայի ավարտին 3 ուսանող հանձնել է ստուգարքը՝ 1 գեր., 1 լավ, 1 բավ.:

IV կուրսում «Օրթոպեդ-ստոմատոլոգի օգնական» պրակտիկան ղեկավարել է Դ. Անսարին: Պրակտիկայի ավարտին 4 ուսանող հանձնել է ստուգարքը՝ 3 գեր., 1 լավ:

V ավարտական կուրսում «Մանկական ստոմատոլոգիա» ուսումնաարտադրական պրակտիկան նշանակվել է 11.01.2024թ-ից մինչև 24.01.2024թ-ը, ներառելով շաբաթ օրերը: Սակայն 501 խմբի բոլոր 3 ուսանողները պրակտիկան անցել են իրենց երկրներում, ներկայացրել են այդ մասին վկայող թղթապանակները, գերազանց գնահատականներով:

Բուժական գործ մասնագիտության հերթական ուսումնաարտադրական պրակտիկաները կազմակերպվել են հետևյալ կերպ՝

II կուրսում՝ «Բուժքրոջ օգնական», պրակտիկան անցկացվել է ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում, ղեկավարներ՝ Կրասնիկովա Ա, Դավիդյան Մ., Նալբանդյան Ա., Արշակյան Ջ., Ավետիսյան Ք.,

III կուրսում՝ «Մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական», պրակտիկան անցկացվել է ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում, ղեկավարներ՝ Դավիդյան Մ., Նուրիջանյան Ա.,

IV կուրսում՝

- «Բժշկի օգնական/Թերապիա», պրակտիկան անցկացվել է ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում, ղեկավարներ՝ Հ.Հովհաննիսյան, Ք.Ավետիսյան, Ջ.Արշակյան,
- «Բժշկի օգնական/Վիրաբուժություն» պրակտիկան անցկացվել է «Շենգավիթ» ԲԿ-ում, ղեկավարներ՝ Ա.Թադևոսյան :

V կուրսում՝ «Բժշկի օգնական/Մանկաբարձություն-գինեկոլոգիա» պրակտիկան անցկացվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում, ղեկավարներ՝ Տ.Արշակյան, Ա.Ասատրյան, «Բժշկի օգնական/Շտապ բուժօգնություն» պրակտիկան անցկացվել է «Շտապ բուժօգնության կայան №2» ՓԲԸ-ում, ղեկավարներ՝ Օհանյան Հ., Դանիելյան Դ.:

2023-2024 ուստարում Բուժական գործ մասնագիտության պրակտիկան կազմակերպվել է նաև այլ բուհերից տեղափոխված այն ուսանողների համար, ովքեր ունեցել են առարկայական տարբերություններ նախորդ ուստարիների ուսումնա-արտադրական պրակտիկայից:

Ուսումնաարտադրական պրակտիկայից առարկայական տարբերությունների լրացումների վերաբերյալ տեղեկատվություն.

1. «Բուժական գործ» մասնագիտության տարբեր կուրսերի ուսանողներն իրենց ուսումնաարտադրական պրակտիկաների առարկայական տարբերությունները լրացրել են հետևյալ կերպ՝

«Բուժքրոջ օգնական» պրակտիկան անցկացվել է 06.04-27.04.2024թ. (շաբաթ օրերին) ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում, ղեկավարել Է. Մանուկյանը (7 ուսանող):

«Մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական» պրակտիկան անցկացվել է 06.04-27.04.2024թ. (շաբաթ օրերին) ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում, ղեկավարել Է. Մանուկյանը (5 ուսանող):

«Բժշկի օգնական/Թերապիա» պրակտիկան անցկացվել է 20.06-25.06.2024թ., Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում, ղեկավարել է Մ. Դավիդյանը (6 ուսանող):

«Բժշկի օգնական/Վիրաբուժություն» պրակտիկան անցկացվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում, ղեկավարել է Հ. Օհանյանը (6 ուսանող): Պրակտիկան անցկացվել է 2024 թ-ի մարտ և ապրիլ ամիսներին՝ ղեկավարի հերթապահության օրերին:

Այսպիսով, 2023-2024 ուստարվա օտարերկրյա ուսանողների 57%-ը ուսումնա-արտադրական պրակտիկան անցկացել է ՀՀ-ի հետևյալ բժշկական հաստատություններում՝ «Շենգավիթ» ԲԿ, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, ԱԲՀ ԳԲՈՒԿ, «Շտապ բուժօգնության կայան №2» ՓԲԸ, «Արեգակ» ԲԿ:

Օտարերկրյա ուսանողների 43%-ը, պրակտիկան անցել է ըստ բնակության վայրի՝ տարբեր բուժհաստատություններում, և ուսումնական մաս ներկայացրել այն հավաստող համապատասխան փաստաթղթեր, այդ թվում լուսանկարներ պրակտիկայի վայրից: 8 ուսանող պրակտիկա չի անցել:

Պրակտիկա չանցած ուսանողները, ըստ ԱԲՀ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգի, պարտավորված են լրացնել իրենց համար ակադեմիական պարտք համարվող չանցած պրակտիկան մինչև մյուս ուսումնական տարվա ավարտը:

Առաջարկներ և հանձնարարականներ պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավման վերաբերյալ.

- պրակտիկայի ընթացքում տեսական և գործնական գիտելիքների միջև կապի ապահովման հնարավոր միջոցների բարելավում, կլինիկական մտածելակերպի ձևավորում,
- ուսանողների և դասախոսների շարունակական նախապատրաստում պրակտիկայի արդյունավետ անցկացման համար /ծանոթացում պրակտիկայի անցկացման կանոնակարգին, պրակտիկայի թղթապանակի լրացմանը և այլն/,
- պրակտիկայի լրամշակված թղթապանակի գործնականում կիրառման արդյունավետության գնահատում,
- յուրաքանչյուր պրակտիկայի ավարտից հետո ուսանողների շրջանում պրակտիկայից բավարարվածության հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն և քննարկում համապատասխան ստորաբաժանումներում,
- արտերկրում պրակտիկա անցնող ուսանողները պարտավոր են ներկայացնել այն սահիկաշարի տեսքով, վերջինիս նպատակն է բարձրացնել պատասխանատվությունը պրակտիկայի նկատմամբ:

14. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Ավանդական բժշկության համալսարանի Արտաքին կապերի բաժինը (այսուհետ նաև արտաքին կապերի բաժին) համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ԱԲՀ-ում գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Արտաքին կապերի բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը, բաժնի առաջատար մասնագետները՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

Արտաքին կապերի բաժնի հիմնական նպատակն է ապահովել համագործակցությունը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոն-ների միջև, ընդլայնել միջազգային համագործակցությունը, նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, համալսարանի և միջազ-գային այլ կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, այլ երկրներից ուսանողների ներգրավման ու երկրների աշխարհագրության մեծացմանը:

1. ԱԲՀ ուսանողների ընդունելություն և հրամանգրում

1.1. 2023թ. մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի նախապատրաստական աշխատանքներ:

1.2. ՀՀ ԿԳՄՍՆ կողմից սահմանված ժամկետներում՝ 15.06.2023-22.09.2023 (գրություն N27/15.2/13738-2023, 01.06.2023), կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍՆ՝ փորձաքննության:

1.3. Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանագրում:

1.4. Մինչև 2023թ.-ի սեպտեմբերի 29-ը կատարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:

1.5. Հոկտեմբերին կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունե-լության արդյունքների հաստատում՝ Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ:

1.6.Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներից է նաև օտարերկրյա ուսանողների ժամանակավոր կացության քարտերի կազմակերպման գործընթացը, որի համար բաժինը համագործակցում է ՀՀ Անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ: Կացության քարտերի հետ կապված աշխատանքը կատարվել է 2023թ. սեպտեմբեր–նոյեմբեր և 2024թ. փետրվար-մայիս ամիսներին՝ ուսանողներին բուհ հրամանագրելուց և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատումը ստանալուց հետո: Բաժնի կողմից պատրաստվել են անհրաժեշտ փաստաթղթեր և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՍՆ, ինչպես նաև ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն: 2023-2024 ուսումնական տարում կատարվել է նաև արդեն ԱԲՀ ուսանող հանդիսացող ուսանողների ժամանակավոր կացության քարտերի վերաձևակերպում:

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը

2.1. Արտաքին կապերի բաժինը համագործակցում է ուսանողների ներգրավմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպությունների հետ (Campus International, Study Medicine Europe և այլն):

2.2.Ուսանողների հավաքագրումը կատարվել է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա: Ուսանողների ներգրավումը համալսարանի կրթական գործընթացին իրականացվել է համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից մշակված կարգերի համաձայն:

2.3. Արտաքին կապերի բաժինը արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ամբողջ տարվա աշխատանքի ընթացքում:

2.4. Դիմորդների դիմումները/ հայտերը ներկայացվել են համալսարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեներին (info@utm.am, tradmeduni@mail.ru): Բաժնի կողմից նախնական փուլում ճշտվել է դիմորդի քաղաքացիությունը/անձնագրային տվյալները և միջնակարգ /բարձրագույն կրթության վկայականի/այլ վկայականների առկայությունը, ներկայացվել են համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունները, առավելություններն ու հնարավորությունները:

2.5. Ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացվել է ողջ տարվա ընթացքում:

2.6. Արտաքին կապերի բաժինը աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագիր տրամադրելու համար, կատարել է հարցումներ և ստացել պարզաբանումներ:

3. Տարվա ընթացքում Արտաքին կապերի բաժնի վարիչը, ըստ անհրաժեշտության պատրաստել և ներկայացրել է հաշվետու տեղեկանքներ ՀՀ ԿԳՄՍՆ, ԱԳՆ ստորաբաժանումներին և այլն: ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի հանձնարարությամբ 2023-2024 ուստարում Արտաքին կապերի բաժնի վարիչը պատրաստել է «Զեկույց, գործող պայմանագրերի ընթացիկ վիճակի ամփոփում» (13.05.2024) և «Ավանդական բժշկության համալսարանի գործող ՌԶԾ-ի արտաքին կապերի բաժնի չափանիշի վերլուծություն» (15.05.2024), որը պահվում է բաժնի առօրյա գործերում:

4. Արտաքին կապերի բաժինը բոլոր ստորաբաժանումների հետ միասին մասնակցել է ուսանողների հետ տարվող աշխատանքներին՝ հանդես գալով որպես համակարգող օղակ ուսանողների և համալսարանի ստորաբաժանումների միջև: Տարվա ընթացքում դեկանի, Ուսումնական մասի վարիչի, դասախոսների հետ միասին իրականացվել են հանդիպումներ, ժողովներ ուսանողների հետ ՝ կարգապահական, ակադեմիական առաջադիմության և այլ հարցերի վերաբերյալ:

Բաժինը աջակցել է օտարերկրյա ուսանողներին ինչպես կրթական, այնպես էլ իրավական, առօրեական և այլ հարցերում՝ ստեղծելով հնարավորինս բարենպաստ պայմաններ ուսանողների համար: Ամբողջ տարվա ընթացքում ակտիվ կապ է պահպանվել

ուսանողների և նրանց ծնողների հետ սոցիալական ցանցերի, էլեկտրոնային հաղորդագության և հեռախոսակապի միջոցով և նրանց հարցերին տրվել է օպերատիվ լուծում: Բաժինը նաև համագործակցել է համալսարանի ստորաբաժանումների հետ՝ ուսանողների հաճախելիության ու առաջադիմության հետ կապված հարցերի վերաբերյալ:

5. Ամփոփելով ընդունելության արդյունքները պետք է նշել, որ համեմատած 2022-2023 ուստարվա՝ 2023-2024 ուստարում նկատվեց դիմորդների թվի նվազում:

Ստորև գծապատկեր 16-ում ներկայացված են 2023-2024 ուստարվա ուսանողների ընդունելության արդյունքները համեմատած 2022-2023 և 2021-2022 ուստարիների հետ:

Գծապատկեր №16



Գծապատկեր №17

Գծապատկեր № 17-ում ներկայացված է 2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուստարիների ուսանողների ընդունելության արդյունքները ըստ երկրների:



- *2023-2024 ուստարվա աշնանային կիսամյակում Ավանդական բժշկության համալսարան է տեղափոխվել 38 օտարերկրյա ուսանող՝*
  - *Բուժական ֆակուլտետ II կուրս՝ 24 (Հնդկաստան՝ 20, Ֆիլիպիններ՝ 2, Եգիպտոս՝ 1, Բանգլադեշ՝ 1)*
- *2023-2024 ուստարվա գարնանային կիսամյակում Ավանդական բժշկության համալսարան է տեղափոխվել 20 հնդիկ ուսանող՝*
  - *Բուժական ֆակուլտետ II կուրս՝ 1*
  - *Բուժական ֆակուլտետ III կուրս՝ 5*
  - *Բուժական ֆակուլտետ IV կուրս՝ 4*
  - *Բուժական ֆակուլտետ V կուրս՝ 10*

Ներկայացնենք «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների առաջին կուրս ընդունված և հրամանագրված, ինչպես նաև ուսումնական պլանները կատարած, ստուգարքներն ու քննությունները հանձնած անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների համապատասխան կուրս փոխադրված օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների ընդհանուր քանակը 2023-2024 ուստարվա սկզբին՝ ըստ երկրների:

Բուժական ֆակուլտետ

Աղյուսակ № 9

Կուրս	Ընդամենը	Երկիր
I	73	Հնդկաստան-70; Հորդանան-1; Ֆիլիպիններ-1; Սիրիա-1
II	111	Հնդկաստան-95; Հորդանան-7; Ֆիլիպիններ-3; Եգիպտոս-1; Բանգլադեշ-1; Սիրիա-1; Իտալիա-1; Մեծ Բրիտանիա-1; Իռլանդիա-1
III	74	Հնդկաստան-65; Հորդանան-8; Իրան-1
IV	64	Հնդկաստան-59; Մեծ Բրիտանիա-2; Շվեդիա-1; Իրաք-1; Շրի Լանկա-1
V	109	Հնդկաստան-101; Հորդանան-5; Ֆիլիպիններ-2; Մեծ Բրիտանիա-1
VI	82	Հնդկաստան-58; Մեծ Բրիտանիա-12; Իրաք-3; Հորդանան-2; Գանա-1; Իռլանդիա-2; Իրան-1; Շրի Լանկա-1; Շվեդիա-1; Եգիպտոս-1
Ընդամենը	513	Հնդկաստան-448; Հորդանան-23;Իրաք-4; Մեծ Բրիտանիա-16; Իրան-2; Շվեդիա-2; Իռլանդիա-3; Ֆիլիպիններ-6; Շրի Լանկա-2; Իտալիա-1; Սիրիա-2; Գանա-1; Եգիպտոս-2; Բանգլադեշ-1

Ստոմատոլոգիական ֆակուլտետ

Աղյուսակ № 10

Կուրս	Ընդամենը	Երկիր
I	4	Իրան-3; Հորդանան-1
II	13	Իրան-4; Հորդանան-9
III	9	Իրան-3; Հորդանան-5; Վանուատու-1
IV	10	Հորդանան-6; Իրաք-1; Իրան-1; Հնդկաստան-2
V	3	Իրաք-1; Իրան-1;Հորդանան-1
Ընդամենը	39	Իրաք-2; Իրան-12; Հորդանան-22; Հնդկաստան-2 Վանուատու-1

Բուժական ֆակուլտետ և Ստոմատոլոգիական ֆակուլտետ

Աղյուսակ № 11

N	Երկիր	Քանակ
1.	Հնդկաստան	450
2.	Իրաք	6
3.	Մեծ Բրիտանիա	16
4.	Հորդանան	45
5.	Իրան	14
6.	Ֆիլիպիններ	6
7.	Իռլանդիա	3
8.	Շվեդիա	2
9.	Շրի Լանկա	2
10.	Իտալիա	1
11.	Եգիպտոս	2
12.	Վանուատու	1
13.	Բանգլադեշ	1
14.	Սիրիա	2
15.	Գանա	1
Ընդամենը		**552**

6. 2023 թվականի Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բաժինը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արսեն Մինասյանի հետ ակտիվորեն մասնակցում էր Միացյալ Թագավորության «Ընդհանուր բժշկության խորհուրդ»-ի /General Medicine Council/ կողմից Ավանդական բժշկության համալսարանի Առաջնային բժշկական որակավորման ճանաչման գործընթացին: Ներկայացնելով բոլոր անհրաժեշտ և պահանջված փաստաթղթերը՝ Միացյալ Թագավորության «Ընդհանուր բժշկության խորհուրդը» /General Medicine Council/ ճանաչեց Ավանդական բժշկության համալսարանի Առաջնային բժշկական որակավորման /PMQ/ համապատասխանությունը՝ GMC-ի

չափանիշներին: Սա նշանակում է, որ ԱԲՀ-ից առաջնային բժշկական որակավորում ստացած ցանկացած բժիշկ կարող է դիմել PLAB թեստը հանձնելու և GMC գրանցման համար: Սա մեծ ձեռքբերում է համալսարանի համար, քանի որ այն նպաստելու է դիմորդների աճին և աշխարհագրական շրջանակների ընդլայմանը:

7. Ավանդական բժշկության համալսարանի ուսանողների համար 21.10.2023թ.-ին կազմակերպվեց «Մերձեցման երեկո»: Միջոցառումը կազմակերպվել էր "Campus International" ընկերության կողմից: Բաժինը նույնպես ակտիվորեն մասնակցում էր կազմակերպչական հարցերին: Միջոցառմանը մասնակցում էին համալսարանի ղեկավարությունն ու աշխատակիցները, «Campus International» ընկերության աշխատակիցները, ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանատան երկրորդ քարտուղար Ադիթյա Կումար Պանդեյը, Հնդկաստանի այլ հարգարժան ներկայացուցիչներն ու համալսարանի տարբեր ազգությունների ուսանողները: Բացման հանդիսավոր արարողությանը համալսարանի ղեկավարության անունից ողջունեց Ավանդական բժշկության համալսարանի դեկան Անահիտ Կարապետյանը՝ շնորհակալություն հայտնելով «Campus International» կենտրոնի տնօրեն Աշոկ Կարուվարաթոդիին և կենտրոնի աշատակիցներին միջոցառման նախաձեռնման և կազմակերպման համար: Երեկույթի ընթացքում տարբեր ազգերի ուսանողներ ներկայացրեցին իրենց ազգային պարը, երգն ու երաժշտությունը՝ նպաստելով տարբեր ազգության ուսանողների համախմբմանը, բարեկամական և ընկերական հարաբերությունների խորացմանը:

8. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ENIC Armenia) 31.10.2023թ.-ին Council of Europe-ի (ԵԽ) հովանու ներքո կազմակերպեց «Կրթության շահագրգիռ կողմերին զինել կոմպետենցիաներով կեղծարարությունների բացահայտման և դրանց դեմ պայքարելու համար /DETECT» թեմայով համաժողով-դասընթաց: Համաժողով-դասընթացին մասնակցեցին արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը և բաժնի առաջատար մասնագետ Հեղինե Գյուլնազարյանը:

9. ԱԲՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և Երևանի Ավանի շախմատի մարզադպրոցի աջակցությամբ 14.10.2023թ.-ին ԱԲՀ-ում անցկացվեց ներբուհական շախմատի մրցաշար, որին մասնակցում էին համալսարանի հայ և օտարազգի թվով 24 ուսանողներ: Մրցաշարն ընթացավ հետաքրքիր, և լարված պայքարում՝ I պատվավոր տեղ զբաղեցրեց՝ Էրֆան Աղային /Ստոմատոլոգիական ֆակուլտետ, IV կուրս/, II տեղ՝ Կաբիլան Մանիվել /Բուժական ֆակուլտետ, II կուրս/, II տեղ՝ Յազեն Բիլալ Աբբասս Ալխաթիբ /Ստոմատոլոգիական ֆակուլտետ, III կուրս/: Մրցաշարի պատվավոր 3 տեղերը զբաղեցրած ուսանողներին մեդալներ, պատվոգրեր և նվերներ հանձնեց Ավանի շախմատի մանկապատանեկան դպրոցի տնօրեն, Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահության անդամ, շախմատի ՖԻԴԵ-ի սպորտի վարպետ Դավիթ Հունանյանը:

10. ԱԲՀ հնդիկ շրջանավարտներից շատերը Հնդկաստանում հաջողությամբ հանձնեցին FMGE քննությունը, որը մեծ հպարտություն է համալսարանի համար:

11. 17.01.2024թ.-ին ՀՀ-ում և Վրաստանում Հնդկաստանի դեսպանատան երկրորդ քարտուղար Ադիթյա Կումար Պանդեյը պաշտոնական այց կատարեց Ավանդական բժշկության համալսարան: Այցի նպատակն էր ծանոթանալ կրթօջախի ակադեմիական միջավայրին, հանդիպել բուհի ղեկավար կազմին և ուսանողներին, ինչպես նաև

համալսարանի գործընկեր «Campus International» կազմակերպությանը: Հարգարժան քարտուղարը ուսանողների հետ ինտերակտիվ քննարկումներ ունեցավ: Ադիթյա Կումար Պանդեյը պաշտոնական այցի շրջանակներում ողջունեց նաև առաջին կուրսի հնդիկ ուսանողներին, հաջողություններ մաղթեց նրանց ուսման բնագավառում:

12. 18.02.2024թ.-ին, երկկողմ համագործակցության նպատակով, Ավանդական բժշկության համալսարան էին այցելել Հնդկաստանի «St. Francis World School»-ի ներկայացուցիչներ Աջիտ Կումար Վասուդեվան Նաիրը և Սմիթա Ջոսը: Հանդիպման նպատակն էր համատեղ կրթական, մշակութային ծրագրերի մշակումը, դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ներգրավման նպատակով փոխադարձ այցերի կազմակերպումը, մասնագիտական խորհրդատվության տրամադրումը և այլն: Այցի շրջանակում հյուրերը ծանոթացան ԱԲՀ կրթական ծրագրերին, ընդունելության կանոնակարգին, համալսարանի կրթական միջավայրին:

13. 26.04.2024թ.-ին ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Նիլակշի Սահա Սինհային պաշտոնական այցով հյուրընկալվեց Ավանդական բժշկության համալսարանում: Այցի նպատակն էր ծանոթանալ համալսարանի ակադեմիական միջավայրին, հանդիպել բուհի ղեկավար կազմին և ուսանողներին: Նախ ներկա բոլոր ուսանողները մեկ առ մեկ ներկայացան, այնուհետև պատասխանեցին դեսպանին հուզող հարցերին: Հանդիպումն անցավ ջերմ, բարեկամական ու անմիջական մթնոլորտում:

14. Արտաքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն ԱՄՆ Պետքարտուղարության կազմակերպմամբ 31.07.2024թ.-ին Վաշինգտոնում կայացավ «Կրթություն ԱՄՆ» գլոբալ ցուցադրություն (EducationUSA Global Showcase), որի ընթացքում մասնակից երկրները հնարավորություն ունեցան իրենց տրամադրված տաղավարներում կազմակերպել երկրների բարձրագույն կրթության և կրթական հաստատությունների կողմից արտասահմանյան ուսանողներին տրամադրվող ծրագրերի ցուցադրություն: Ցուցադրությանը պատշաճ մասնակցություն ապահովելու համար Ավանդական բժշկության համալսարանը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին տրամադրեց հաստատության վերաբերյալ տեղեկատվական բուկլետներ և բրոշյուրներ:

15. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 20.06.2024թ.-ին կայացավ Հայաստանում էրազմուս+ ազգային գրասենյակի հետ համագործակցությամբ կազմակերպված «Էրազմուս+ նախագծերի մեկնարկային օր 2024» միջոցառումը: Միջոցառմանը մասնակցեցին ԱԲՀ-ի Արտաքն կապեր բաժնի վարիչ Անի Սարգսյանը և Արտաքին կապեր բաժնի առաջատար մասնագետ Հեղինե Գյուլնազարյանը: Միջոցառման նպատակն էր ներկայացնել էրազմուս+ ծրագրի վերջին՝ 2023թ. մրցույթի արդյունքում դրամաշնորհ ստացած բուհերի և ՄԿՈ-ների հաստատությունների կողմից իրականացվող նախագծերի հիմնական նպատակները, ակնկալվող արդյունքները և ծավալել քննարկումներ՝ ուղղված այդ նախագծերի իրականացման, ոլորտի մարտահրավերների ու դրանց լուծման ուղիների բացահայտմանը: Միջոցառմանը մասնակցում էր բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ներկայացուցիչներ, կրթության ոլորտում քաղաքականություն մշակողներ, հասարակական կազմակերպություններ, բիզնես ոլորտի ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ անձինք:

16. 08.07.2024թ.-ին տեղի ունեցավ ԱԲՀ «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների՝ 2023-2024 ուստարվա շրջանավարտների երդման և դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Միջոցառման սկզբում շրջանավարտներին ողջույնի և շնորհավորանքի խոսքեր ուղղեցին ԱԲՀ դեկան Անահիտ Կարապետյանը, ԱԲՀ Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը, դասախոս-կուրսղեկներ Նինա Խլղաթյանը, Նաիրա Հունանյանը: Իրենց շնորհակալական խոսքով ելույթ ունեցան նաև ավարտական կուրսերի ավագները: Միջոցառմանը ներկա էին ԱԲՀ աշխատակիցներ, տարբեր դեսպանատների ներկայացուցիչներ, ուսանողների ծնողներ, հարազատներ:

15. ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԲՈՒԿ-ի բժշկական օգնության և սպասարկման տեսակները չորսն են՝ բժշկական ընդհանուր պրակտիկա, ստոմատոլոգիական, ատամնատեխնիկական, ռեֆլեքսոթերա-պևտիկ:

Աշխատողների ընդհանուր քանակը 14 է, որից 9-ը բժիշկներ են՝ 1 հոմեոպաթ, 4 ռեֆլեքսոթերապևտ, 1 գաստրոէնտերոլոգ, 3 ստոմատոլոգ: Միջին բուժանձնակազմում ընդգրկված են՝ 2 բուժքույր, 1 սանիտարուհի, 1 ատամնատեխնիկ:

Կենտրոնում իրականացվում է ըստ մասնագիտությունների պրակտիկ ուսումնական գործընթաց և բուժսպասարկում, բացի դրանից նաև գիտական աշխատանքներ՝ ավանդական բժշկության բնագավառում:

- Կատարվում է հիվանդների վերլուծություն ուսանողների մասնակցությամբ, մշակվում է բուժման պլան և ինտեգրատիվ բուժում:
- Անցկացվում են բուժական պրոցեդուրաներ, ծանոթացվում է կատարման տեխնիկային և անվտանգության կանոններին:
- Կատարվում է ասեղ-այրում թերապիա, բազմասեղային ներգործություն, բուժական մերսում, ասեղ-այրում թերապիան զուգորդվում է ֆիտոթերապիայի և ֆարմակոթերա-պիայի հետ:

2023թ. բուժման կուրս են անցել թվով 167 հիվանդ, իսկ ստոմատոլոգիական կաբինետում՝ 138:

Ստոմատոլոգիական բաժանմունքում բացի հիվանդների սպասարկումից, անցկացվում են ուսումնական գործնական պարապմունքներ, ուսումնաարտադրական պրակտիկաներ, որոնց ընթացքում ուսանողները ձեռք են բերում համապատասխան հմտություններ ու կարողություններ:

Օտարերկրյա ուսանողների մի մասը ցանկությամբ ուսումնաարտադրական պրակտիկան անցկացվել է Համալսարանի ԳԲՈՒԿ-ում, որն էլ իրականացրել են մեր դասախոսները: «Բուժքրոջ օգնական» /II կուրս/, «Բժիշկ ստոմատոլոգ-թերապևտի օգնական» /III կուրս/ «Բժիշկ ստոմատոլոգ-վիրաբույժի օգնական» /IV կուրս/, «Բժիշկ ստոմատոլոգ-օրթոպեդի օգնական» /IV կուրս/, V կուրսի «Մանկական ստոմատոլոգի օգնական» ուսումնաարտադրական պրակտիկաներն անցկացվել են ԳԲՈՒԿ-ում:

«Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում» առարկաների շրջանակում ուսանողներն ուսումնասիրել են ստոմատոլոգիական կաբինետների կահավորումը, ստոմատոլոգիական գործիքները, ստոմատոլոգիական գործիքների ախտահանումը, նրանց տեսակները, ավտոկլավները, դեոնտոլոգիան և էրգոնոմիկան ստոմատոլոգիայում:

2023-2024 ուստարվա գարնանային կիսամյակում «Բուժքրոջ օգնական» /II կուրս/, «Բժիշկ ստոմատոլոգ-թերապևտի օգնական» /III կուրս/, «Բժիշկ ստոմատոլոգ-օրթոպեդի օգնական» /IV կուրս/ և «Բժիշկ ստոմատոլոգ-վիրաբույժի օգնական» ուսումնաարտադրական պրակտիկաները նույնպես անցկացվել են ԳԲՈՒԿ-ում՝ նախատեսված ժամանակացույցով:

Ուսումնասիրել են մանկական տարիքի կծվածքների առանձնահատկությունները /կաթնային, խառը, մշտական/, կարիեսի կանխարգելումը և բուժումը մանկական հասակում, կաթնատամների հեռացման առանձնահատկությունները:

16. ԳՐԱԴԱՐԱՆ

2023-2024 ուստարում շարունակվել է գրադարանի ծառայությունների մատուցման բարելավումն ու ընդլայնումը: Ուսանողների հոսքն ընթերցասրահ այս ուսումնական տարում ևս ակտիվ է եղել /ուսանողների այցերի քանակը՝ 885/:

Ավելացել է նաև գրքատայցը, բացվել են բազմաթիվ գրադարանային քարտեր:

Հաշվետու ուսումնական տարում ԱԲՀ-ն համագործակցության հուշագիր է կնքել ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի» հետ: Ըստ հուշագրի՝ ԱԲՀ ուսանողները կարող են օգտվել ԱԱԻ գրադարանից, ընթերցասրահից, գիտաբժշկական գրադարանի համակարգչային կենտրոնից և էլեկտրոնային բժշկական շտեմարաններից: Կազմվել է նաև ԱԱԻ գրադարանից օգվել ցանկացող ուսանողների համար նախատեսված «Պարտավորագրի» տեքստը, որով ուսանողը պարտավորվում է չվնասել ԱԱԻ գրադարանի գույքը:

Ուսանողներին տեղեկացնելու նպատակով՝ համագործակցության վերաբերյալ տեղեկատվությունը հայերեն և անգլերեն տարբերակներով տեղադրվել է ԱԲՀ սոցիալական հարթակում և պաշտոնական կայքէջում:

Այս ուսումնական տարին ԱԲՀ գրադարանի համար կարևորվեց նաև «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանն անդամակցության ժամկետի երկարաձգմամբ: Երկու կառույցները կհամագործակցեն մինչև 2025 թվականը:

Վերջինիս հետ համագործակցության շրջանակներում կնքվել են մի շարք միջազգային էլեկտրոնային շտեմարաններից օգտվելու պայմանագրեր:

Ըստ «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի» հաշվետվության՝ ավելացել է օնլայն գրադարաններ մուտք գործող ԱԲՀ ուսանողների թվաքանակը:

14.11.2023 թ.-ին «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիան» ԱԲՀ-ին ներկայացրել է մեր ուսանողների հաճախելիության ցուցանիշի մասին հաշվետվություն, որի պատկերը հետևյալն է՝

INSTITUTION	2021	2022
American University of Armenia	12758	11442
Yerevan State University	0	978
Dilijan International School of Armenia Foundation	653	961
Armenian-Russian University	7	957
Armenian State University of Economics	150	951
Yerevan Brusov State University	6	839
National Library of Armenia	47	779
Eurasia International University	0	555
Armenian National Lyceum after Anania Shirakatsy	32	272
University of Traditional Medicine	0	220
Shirak State University named after M.Nalbandyan Foundation	2	169
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University	0	165
Northen University LLC	2	82
City Central Isahakyan Library	2	61
Armenian State Institute of Physical Culture and Sport	33	19

«Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի» կողմից ստացել ենք մի շարք առաջարկներ, այդ թվում՝ Բեռլինի հանրահասանելիության 16-րդ գիտաժողովի շրջանակներում 16.11.2023թ. տեղի ունեցած վեբինարի հրավերը: Վեբինարի կարևորագույն թեմաներից մեկը՝ հանրահասանելի շտեմարաններում հոդվածներ հրատարակելիս հեղինակների իրավունքների պաշտպանությունն էր:

Վեբինարի ընթացքում խոսել են նաև համաձայնագրերի հետ կապված խնդիրների մասին, այդ թվում նաև՝ ինչպե՞ս կարելի է կանխել հրատարակիչների կողմից չարաշահումները: Քննարկվել են հեղինակների բոլորը իրավունքները պահպանելու օգնության տարբերակները:

Հիշյալ տեղեկատվությունն ևս թարգմանվել է անգլերեն, ապա երկլեզու տարբերակով տեղադրվել կայքէջում և Ֆեյսբուքում:

Այս ուսումնական տարում ներկա եմ եղել 2 միջոցառման:

Գրադարանավարը 14.12.2023թ. մասնակցել է «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի» կազմակերպած «Բաց գիտություն» թեմայով սեմինարին: Քննարկված մի շարք թեմաների թվում էին նաև էլեկտրոնային շտեմարանների հանրահասանելիությունը, ազգային քաղաքականության կարևորությունը և օրենսդրությամբ կարգավորումների անհրաժեշտությունը:

Գրադարանավարը 15.04.2024թ. մասնակցել է Ազգային գրադարանում անցկացված սեմինարին: Թեմա՝ EBSCO-ի որոնումը Ազգային գրադարանի վեբկայքում:

ԱԲՀ գրադարանը առաջարկ է ստացել «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի» կողմից «Science» հեղինակավոր ամսագրում հոդվածի տպագրման համար:

Համալսարանի կողմից որոշվել է Նաիրա Հունանյանի թեկնածությունը, ում կոնտակտները ուղարկվել է համապատասխան էլեկտրոնային հասցեին:

2023-2024 ուստարում գրադարանը համալրվել է էլեկտրոնային գրքերով և նոր դասախոսություններով:

Բացի այդ, ԱԲՀ գրադարանին նվիրաբերվել են մի շարք գրքեր:

ԳԲՈՒԿ-ի աշխատակից Վահե Մկրտչյանը ԱԲՀ-ին նվիրաբերել է 8 անուն բժշկական գիրք: ԱԲՀ դեկան Անահիտ Կարապետյանը համալսարանին ևս գրքեր է նվիրաբերել՝ 44 միավոր գիրք:

Երկու նվիրատվությունների վերաբերյալ կազմվել են նվիրաբերության ակտեր:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս նոր գրքերը կոմպլեկտավորվել են, կատարվել է գրքերի գրանցում համապատասխան գրքամատյաններում: Նոր էլեկտրոնային գրքերը նույնպես տեղակայվել են առարկայի համար ստեղծված համապատասխան թղթապանակներում:

Թե՛ էլեկտրոնային, և թե՛ գրքամատյան գրանցած բոլոր գրքերը ցուցակագրվել են առանձին էլեկտրոնային ցուցակներում:

17. ԱԲՀ ԿԱՅՔԷՋ

2023-2024 ուստարվա ընթացքում ԱԲՀ պաշտոնական կայքում աշխատանքներ են կատարվել մի քանի ուղղություններով՝ բովանդակային փոփոխություններ, ինֆորմացիայի, կանոնակարգերի և այլ փաստաթղթային թարմացումներ ու մուտքեր: Կատարվել է նաև ինֆորմացիոն-տեղեկատվական նյութերի պատրաստում և տեղադրում:

Այս ուսումնական տարին առանձնանում է կարևորագույն փաստաթղթի՝ ԱԲՀ «PR ռազմավարության» մշակմամբ և ներդրմամբ: Այն կազմելիս հատուկ ուշադրության է արժանացել PR գործիքների ամբողջական կազմի /գովազդ և տեղեկատվություն, գովազ-դային, սոցիալական, մարքենթինգային միջոցներ, գործողություններ, հաղորդակցություններ, որոնք օգտագործվում են PR գործունեության առարկայի վրա ազդելու համար/ կիրառումը:

Թարմացումներ և մուտքեր

2023-2024 ուստարվա ընթացքում ավելացվել է Գիտական, Ուսանողական և Ուսանողական գիտական ընկերության կազմերը, Ուսանողական և Գիտական ուսանողական խորհրդի հաշվետվություններն ու աշխատանքային պլանները, ինչպես նաև ԱԲՀ մյուս ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները, Ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունները, կանոնադրություններ, կանոնակարգեր, մշտադիտարկումներ, վերլուծություններ, մասնագրեր և մի շարք այլ փաստաթղթեր: Բոլոր ավելացումները կատարվել են երկու լեզուներով՝ հայերեն և անգլերեն:

Ինֆորմացիոն-տեղեկատվական նյութեր

Բազմաթիվ ինֆորմացիոն-տեղեկատվական բնույթի նյութեր են կազմվել և տեղադրվել կայքէջի «Նորություններ և իրադարձություններ», «Հայտարարություններ» բաժիններում: Առանձին թղթապանակներով առանձնացվել է կայքէջում և ֆեյսբուքյան էջում տեղադրված ինֆորմացիոն բնույթի նյութերը /այդ թվում նաև հայտարարությունները/ իրենց լուսանկարներով: Յուրաքանչյուր տարվա կատարած աշխատանքներն ընդգրկված են համապատասխան տարեթվով վերնագրված թղթապանակում:

Ֆեյսբուք

2023-2024 ուս. տարվա ընթացքում ակտիվ է եղել նաև Ավանդական բժշկության համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջը: Բոլոր գրառումներն արվել են բացառապես երկլեզու՝ հայերենով և անգլերենով: Վիճակագրական տվյալների համաձայն՝ ավելացել են գրառումների դիտումները, հասանելիությունը, հավանումների քանակներն ու օգտատերերի շրջանում տարածումը:

18. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱԲՀ Ուսանողական խորհուրդը 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իր կանոնադրությանը և աշխատանքային պլանին համապատասխան իրականացրել է բավարար աշխատանք: Բոլոր նիստերը արձանագրվել են:

ՈՒԽ-ն 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ուսանողներին տրամադրել է անհրաժեշտ տեղեկատվություն: Ուսանողները տեղեկացվել են իրենց իրավունքների և պարտականությունների մասին, ինչպես նաև ծանոթացել են կրթական գործընթացի կազմակերպմանը, գնահատման արդյունքների փաստաթղթերին և այլ նյութերին:

ԱԲՀ ուսանողների կրթական կարիքները բացահայտելու համար կիրառվում են մի շարք մեխանիզմներ՝ քննարկումներ և հարցումներ, որոնք կազմակերպվում են դասախոսների, դեկանի և ուսումնական բաժնի հետ: Խորհրդատուների աշխատանքի շնորհիվ բացահայտվում են կրթական գործընթացի կազմակերպման, գիտելիքների գնահատման համակարգի, իրավունքների իրազեկման և այլ հարցեր:

Ուսանողները հնարավորություն ունեն քննարկելու իրենց խնդիրներն ու հարցերը ռեկտորի, արտաքին կապերի բաժնի մասնագետների և գիտական բաժնի ղեկավարի հետ:

Հաշվետու տարում փոփոխություն է կատարվել ՈՒԽ կառուցվածքում՝ ՈՒԽ կազմավորման նոր ստորաբաժանման ստեղծմամբ:

ՈՒԽ-ի կազմում ընդգրկված են նախագահը, փոխնախագահը, սպորտի և մշակույթի ղեկավարները, քարտուղարը և 4 անդամ:

Ուսանողները մասնակցել են առցանց հարցումներին՝ կրթական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, իսկ շրջանավարտները մասնակցել են կրթությունից գոհունակության վերաբերյալ հարցմանը: ՈՒԽ-ն աջակցել է այս աշխատանքներին՝ ապահովելով ուսանողների մասնակցության անհրաժեշտ քանակը և խրախուսելով նրանց:

ՈՒԽ նախագահն ու փոխնախագահը, լինելով համալսարանի Գիտական խորհրդի անդամներ, մասնակցել են ՈՒԽ նիստերին:

ՈՒԽ-ն ներգրավված է եղել նաև կառավարման խորհրդակցություններում, որոնք առնչվում էին անբավարար առաջադիմությանը, ակադեմիական պարտքերին, բացակայություններին, ուսանողների հեռացումներին, ուսման վարձերին և անհրաժեշտության դեպքում ներկայացրել է առաջարկություններ:

Ուսանողների շարժունակության ապահովումը համալսարանի կրթական ծրագրերի որակի երաշխավորման կարևոր ցուցանիշ է:

ԱԲՀ -ն հպարտությամբ ներկայացնում է 2023թ. TEDxUTMA իր առաջին միջոցառումը

«Առողջության ինտեգրված մոտեցում». սա ԱԲՀ -ում TEDxUTMA միջոցառման թեման էր: Միջոցառումը համապարփակ կերպով անդրադարձավ առողջապահությանը վերաբերող տարաբնույթ ասպեկտների՝ հոգեբանությունից և թունաբանությունից մինչև հյուսվածքային ինժեներիա և օրթոպեդիա, գիտությունից և բժշկական կրթությունից մինչև կլինիկական պրակտիկա:

Միջոցառմանը հրավիրված էին ելույթ ունեցողներ՝ Ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ն. Այվազյանը, կլինիկական հոգեբան, դասախոս, դոկտոր Մ. Նաղդալյանը, Ջորջ Վաշինգտոնի համալսարանի ասիստենտ-պրոֆեսոր Զ. Կարապետյանը, ՀՀ ԱԱԻ օրթոպեդիայի և տրավմատոլոգիայի բաժնի ղեկավար, Գյումրու օրթոպեդիայի դպրոցի հիմնադիր դոկտոր Ն. Զաքարյանը:

Միջոցառումը կազմակերպվել էր TEDx միջոցառման պաշտոնական արտոնագրի համաձայն (տրամադրված դեկտեմբերի 4-ին, վավեր՝ 1 տարի, միջոցառման տեսակ՝ համալսարանական, արտոնագրատեր՝ Վ. Գրիգորյան):

ԱԲՀ -ում կայացել է շախմատի ներհամալսարանական մրցաշար

Հոկտեմբերի 14-ին ԱՎԲՀ ԱԲՀ ՈՒԽ նախաձեռնությամբ և Երևանի Ավանի շախմատի մարզադպրոցի աջակցությամբ անցկացվեց շախմատի ներհամալսարանական մրցաշար, որին մասնակցեցին 24 հայ և օտարերկրյա ուսանողներ:

Մրցաշարը անցավ հետաքրքիր և լարված մթնոլորտում, որի արդյունքում ճանաչվեցին համալսարանի լավագույն շախմատիստները՝

1-ին տեղ՝ Էրֆան Աղայի /Ստոմատոլոգիական ֆակուլտետ, 4-րդ կուրս/, 2-րդ տեղ՝ Կաբիլան Մանիվել /Ընդհանուր բժշկության ֆակուլտետ, 2-րդ կուրս/, 3-րդ տեղ՝ Յազան Բիլալ Աբբաս Ալխաթիբ / Ստոմատոլոգիական ֆակուլտետ, 3-րդ կուրս/:

Մրցաշարում առաջին երեք տեղերը զբաղեցրած ուսանողներին մեդալներ, վկայականներ և նվերներ հանձնեց Դավիթ Հունանյանը՝ Ավանի երեխաների և պատանիների շախմատի դպրոցի տնօրենը, Երևանի շախմատի ֆեդերացիայի անդամը, ՖԻԴԵ-ի սպորտի վարպետը: Դավիթ Հունանյանը շնորհավորեց հաղթողներին՝ մաղթելով նոր հաղթանակներ միջհամալսարանական առաջիկա մրցաշարերում:

Մրցաշարը կազմակերպվել էր միջազգային չափանիշներին համապատասխան. մասնակիցները ընտրվել էին հատուկ համակարգչային ծրագրի միջոցով (www.chess-results.com), որի շնորհիվ ուսանողների ծնողներն ու հարազատները հնարավորություն ունեին հետևելու մրցաշարին աշխարհի տարբեր անկյուններից:

ԱԲՀ-ում անցկացվեց ուսանողական գիտական սեմինար՝ «Դիաբետի խնամքի հասանելիություն» թեմայով:

Նոյեմբերի 14-ը դիաբետի դեմ պայքարի համաշխարհային օրն է: Այս առիթով ԱԲՀ-ում անցկացվեց ուսանողական գիտական սեմինար՝ «Դիաբետի խնամքի հասանելիություն» թեմայով: Սեմինարը կազմակերպվել էր ԱԲՀ Թերապևտիկ առարկաների ամբիոնի կողմից (համակարգմամբ՝ ամբիոնի վարիչ, դոկտոր Մ. Նազլուխանյանի և էնդոկրինոլոգ Հ. Դանիելյանի):

Այս գիտական միջոցառման ընթացքում ուսանողները ներկայացրեցին զեկույցներ՝ նվիրված շաքարային դիաբետի էթոլոգիային, պաթոգենեզին, ախտորոշմանն ու բուժմանը, ինչպես նաև անցկացվեցին ինտերակտիվ կլինիկական դեպքերի քննարկումներ:

Սեմինարի մոդերատորներն էին ԱԲՀ Ուսանողական գիտական ընկերության նախագահ Սամուել Ադոմահը, ՈՒԽ անդամները և ԱԲՀ գիտական բաժնի ղեկավար Վ. Գրիգորյանը:

ԱԲՀ-ում տեղի ունեցավ ավարտական դիպլոմների հանձնման և երդման արարողություն

2023-2024 ուսումնական տարվա համար «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետների շրջանավարտների համար կազմակերպվեց դիպլոմների հանձնման և երդման արարողություն:

Միջոցառման սկզբում ԱԲՀ դեկան Անահիտ Կարապետյանը, արտաքին կապերի բաժնի ղեկավար Անի Սարգսյանը, ինչպես նաև դասախոս-ղեկավարներ Նինա Խլղաթյանը և Նաիրա Հունանյանը դիմեցին շրջանավարտներին ողջույնի և շնորհավորական խոսքով: Խմբերի ավագները նույնպես հանդես եկան շնորհակալական խոսքով:

Միջոցառմանը ներկա էին ԱԲՀ աշխատակիցները, տարբեր դեսպանությունների ներկայացուցիչներ, ուսանողների ծնողներն ու հարազատները: Միջոցառման ընթացքում ներկաները վայելեցին հայկական և այլ ազգային կատարումներ:

ՈՒԽ-ի և ուսանողների խնդրանքով ԱԲՀ ղեկավարությունը տրամադրել է հանգստյան օրեր՝ իրենց ազգային հիմնական տոները (Դիվալի, Նովրուզ, Ռամադան, Հոլի) նշելու համար:

ՈՒԽ-ն որպես տեղեկատվության տարածման հարթակ օգտագործում է Facebook սոցիալական կայքը:

ԱԲՀ ղեկավարությունը և ՈՒԽ-ն մեծ ուշադրություն են դարձնում ուսանողների խնդիրներին և դրանց ամբողջական լուծման տրամադրմանը, ինչը միշտ եղել է նրանց առաջնահերթություն:

Այսպիսով, 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանը և ընթացիկ այլ աշխատանքներն իրականացվել են:

Այսպիսով, իրականացվել է ոչ միայն 2022-23 ուստարվա ՈՒԽ-ի աշխատանքային պլանով նախատեսվածը, այլ տարվել են ընթացիկ տարբեր աշխատանքներ:

19. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուստարվա ընթացքում, ԱԲՀ ՈՒԳԸ կազմը փոփոխվել է և համալրվել նոր ուսանողներով: Նշանակվել է ՈՒԳԸ նոր նախագահ՝ 1 տարի ժամկետով՝ Սամուել Ադոմահ: ՈՒԳԸ-ը շարունակել է ակտիվորեն համագործակցել ԱԲՀ Գիտական մասի և ուսանող-ծրագրավարների (facilitators) հետ համատեղ՝ գիտական միջոցառումների կազմակերպման և ուսանողներին գիտական աշխատանքներում և ծրագրերում ներառելու ուղղությամբ:

2023թ. Նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ ԱԲՀ «Թերապևտիկ առարկաների» ամբիոնի կողմից՝ ամբիոնի վարիչ, դոկտոր Մ.Նազլուխանյանի և բժիշկ-էնդոկրինոլոգ Հ.Դանիելյանի համակարգմամբ կազմակերպված «Դիաբետի բուժման հասանելիությունը» ուսանողական գիտական սեմինարը: ՈՒԳԸ-ն նույնպես ակտիվ մասնակցություն ունեցավ

կազմակերպչական աշխատանքներում: Միջոցառման ժամանակ ուսանողների կողմից ներկայացվեցին բանավոր զեկույցներ և ինտերակտիվ քեյսեր:

ԱԲՀ ուսանողներ՝ Պ.Անջանկումարը (ԱԲՀ Գիտական մասի վարիչի համահեղինակությամբ) և Մ.Քամալին ներկայացան գիտաժողովին՝ զեկույցային պաստառներով՝ 2023թ. հոկտեմբերի 16-18 տեղի ունեցած BIO-SEE հոբելյանական գիտաժողովին, ՀՀ ԳԱԱ Լ.Ա.Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտ, Երևան:



ԱԲՀ ՈՒԳԸ անդամները և ուսանողներն ակտիվ մասնակցություն ունեցան ԱԲՀ ուսանող, կ.գ.թ. Մ.Քամալիի կողմից կազմակերպված FABO գիտական մեթոդաբանական դասընթացներին

- ԱԲՀ ուսանողներն ակտիվորեն մասնակցել են բազմաթիվ գիտական միջոցառումների, այդ թվում՝ Bio-SEE կենսապատկերման միջազգային ասոցիացիայի և ՀՀ ԳԱԱ Լ.Ա.Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի կողմից կազմակերպվող կոնֆերանսները և սեմինարները, ԵՊԲՀ կողմից կազմակերպված

“Նյարդագիտության շաբաթ”, “Brain Awareness Week” գիտական միջոցառումները, և այլն:

ԱԲՀ ուսանողներ Ս.Ավագյանը (ձախ նկարում), Պ.Անջանկումարը (աջ նկարում)՝ գիտական միջոցառումներին մասնակցելիս

ԱԲՀ ՈՒԳԸ-ի բազայի վրա ձևավորվեց և գործեց TEDxUTMA միջոցառման (օրակարգը՝ ստորև) կազմկոմիտե: ՈՒԳԸ նախագահ Ս.Ադոմահը հանդես եկավ որպես միջոցառման վարող:

Registration
3:00 pm - 3:10 pm
The Attendees will check in and receive TEDxUTMA badges, leaflets and the Agenda.

Dr. Mher Nagdalyan "The Underdog of Health Industry - Psychotherapy"
3:10 pm - 3:25 pm
Mental health is an occasionally underrated crucial aspect of human health. Let's explore it deeper!

Short break
3:25 pm - 3:35 pm
A brief break between talks, to allow your nervous system "rest and digest" the knowledge gained.

Prof. Hasmik Ayvazyan - "Snakebites: Inspiration, Innovation & Investment"
3:35 pm - 3:50 pm
Snakebites, often overlooked, are critical neglected tropical diseases with deadly consequences. Awareness is key for addressing this problem.

Coffee Break
3:50 pm - 4:10 pm
Enjoy Coffee and Network.

Prof. Zaven Karabekian - "Ready-Made Solutions in Tissue Engineering: Are We There Yet?"
4:10 pm - 4:25 pm
Tissue engineering, revolutionizing healthcare, holds the key to regenerating damaged organs. Join the quest to transform medicine!

Another short break
4:25 pm - 4:35 pm
For managing your satisfaction after the amazing speeches you've just heard, and be mentally preparing for yet another amazing talk!

Dr. Narayr Zegiryan - "Orthopedic Frontiers: Exploring Breakthroughs in Bone Health"
4:35 pm - 4:50 pm
Unlocking the essential: Exploring cutting-edge orthopedic breakthroughs in bone studies.

Closing Remarks
4:50 pm - 5:00 pm
Take-home messages and networks.

Պ.Անջանկումար - մասնակցություն գիտահետա-զոտական խմբի (ղեկավարվում է ԱԲՀ գիտական մասի վարիչի կողմից) աշխատանքներին, թեմա՝ ռեգեներատիվ բժշկություն/նեյրոգիտություն

ԱԲՀ ուսանողներ Պ. Անջանկումարը և Ս. Ադոմահն անցան BIO-SEE ասոցիացիայի կողմից կազմակերպված դասընթաց-վերապատրաստում Ատոմա-ուժային մանրադիտման ոլորտում: Ավարտելուն պես ստացան հավաստագրեր:

ՈՒԳԸ անդամներ Պ.Անջանկումարը և Ս. Ադոմահը Ատոմա-ուժային մանրադիտման դասընթացին

ՈՒԳԸ նախագահ Ս.Ադոմահի կողմից հիմնադրվել է HealthWise նախագիծը որի շրջանակներում նախատեսվում է կրթական վիդեոմատերիալների նկարահանում:

ԱԲՀ ուսանող, ՈՒԳԸ նախագահ Ս. Ադոմահի հեղինակային նախագծի՝ HEALTH-WISE UTMA ներածական տեսահոլովակը
https://www.youtube.com/watch?v=aD7cQp-u04I

Ուսանողական տպագրություններ
Համզեի Ղորբանի - հոդվածներ

- D. Aghabalyan, H. Ghorbani and R. Rituraj, "Relationship of Medicine and Philosophy: Mathematical Modeling of Moral Structures-Etometry," 2023 IEEE 17th International Symposium on Applied Computational Intelligence and Informatics (SACI), Timisoara, Romania, 2023, pp. 000567-000574, doi: 10.1109/SACI58269.2023.10158582.
- H. Ghorbani et al., "Improving the Estimation of Coronary Artery Disease by Classification Machine Learning Algorithm," 2023 IEEE 6th International Conference and Workshop Óbuda on Electrical and Power Engineering (CANDO-EPE), Budapest, Hungary, 2023, pp. 000159-000166, doi: 10.1109/CANDO-EPE60507.2023.10418014.
- H. Ghorbani et al., "Prediction of Heart Disease Based on Robust Artificial Intelligence Techniques," 2023 IEEE 6th International Conference and Workshop Óbuda on Electrical and Power Engineering (CANDO-EPE), Budapest, Hungary, 2023, pp. 000167-000174,

doi: 10.1109/CANDO-EPE60507.2023.10417981.

- Hamzeh Ghorbani, Arsen Minasyan, Harutyun S. Hovhannisyan, Parvin Ghorbani, Simin Ghorbani, Mehrdad Babak Rad, Marieta Davidyan, Natali Minasian, Anahit Mkrtchyan, Eduard Avagyan, Mehdi Ahmadi Alvar and Ali Ghazanfari. STATE-OF-THE-ART MACHINE LEARNING FOR PREDICTION OF CHRONIC KIDNEY DISEASE, International Journal of Applied Engineering & Technology Copyrights @ Roman Science Publications Ins. Vol. 6 No.1, January, 2024 International Journal of Applied Engineering & Technology 1058
- Hamzeh Ghorbani, Mehrdad Babak Rad, Harutyun S. Hovhannisyan, Parvin Ghorbani, Lilit Sukiasyan, Delaram Ansari, Simin Ghorbani, Arsen Minasyan, Anahit Mkrtchyan, Natali Minasian, Aregnazan Ikilikyan, Rozi Yeremyan, Alla Krasnikova, Eduard Avagyan, ENHANCING DIABETES MELLITUS PREDICTION AND SURVEILLANCE: A HYBRID MACHINE LEARNING APPROACH. International Journal of Applied Engineering & Technology Copyrights @ Roman Science Publications Ins. Vol. 5 No.4, December, 2023 International Journal of Applied Engineering & Technology 2448
- Hamed Fadaei, Raghad Mimar, Sheida Shourabadi Takabi, Hamzeh Ghorbani, Mahdiyeh Haj Hosseini and Mehrdad Babak Rad, THE IMPACT OF COVID-19 VACCINE ADMINISTRATION ON BALANCE AND COORDINATION IN COVID-19-NAÏVE, HEALTHY MEN. ISSN: 2633-4828 Vol. 5 No.4, December, 2023 International Journal of Applied Engineering & Technology Copyrights @ Roman Science Publications Ins. Vol. 5 No.4, December, 2023 International Journal of Applied Engineering & Technology 2293
- Ding H, Wang C, Ghorbani H, Yang S, Stepanyan H, Zhang G, Zhou N, Wang W. The impact of magnesium on shivering incidence in cardiac surgery patients: A systematic review. Heliyon. 2024 May 28;10(11):e32127. doi: 10.1016/j.heliyon.2024.e32127. PMID: 38873687; PMCID: PMC11170178.

Պաստառային զեկույցներ

Պ.Անջանկումար

- Grigoryan V.S., Sevoyan G.P., Gasparyan S.S., AnjanKumar P.V., Karabekian Z.I. - “Refining the Methods for Nerve Regeneration Approaches”
- Grigoryan V.S., Sevoyan G.P., Gasparyan S.S., AnjanKumar P.V., Karapetyan S., Karabekian Z.I. - “REFINEMENT OF DECELLULARIZED GRAFTS FOR PERIPHERAL NERVE TISSUE ENGINEERING”

Մ.Քամալի

- M.Kamali, S.Gasparyan, O.Kalinovskaya, Z.Karabekian - “NeuroRevolution: Tissue-Engineered Nerve Grafts Using Silk-Fibroin and Polycaprolactone Fibrous Mats, Enhances with Quercetin for Advanced Antibacterial Dressings.”

20.ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Տնտեսական մասը, համաձայն իր 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանի օգտագործել է տնտեսական մասի աշխատակիցների ներուժը՝ ներհամալսարանական տնտեսությունը կազմակերպելիս:

Հստակեցվել են տնտեսական աշխատակազմի գործառույթները, կարևորվել է տնտեսական մասի աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը, դրանց նկատմամբ իրականացվել են պարբերական ստուգումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

- 2023-2024 ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպման համար հատկացված ֆինանսական ռեսուրսներով ձեռք են բերվել՝
  - գրենական պիտույքներ – 364 800 դրամ
  - մատյաններ, ուսանողական տոմսեր և գրքույկներ – 322 000 դրամ
  - ստոմատոլոգիական նյութեր - 65 000 դրամ
  - առաջին անհրաժեշտության դեղորայք, գլյուկոմետր, տոնոմետր – 138 250 դրամ
- Լսարանները և աշխատասենյակները տեխնիկապես հագեցնելու և կահավորելու համար ձեռք է բերվել ՝
  - Մուլյաժներ, աշխատանքային սեղաններ - 12 747 000 դրամ
- Համալսարանի համակարգչային ցանցի սպասարկման համար ծախսվել է - 1 161 100 դրամ
- Թվային գրադարանի ասոցիացիային անդամագրվելու համար հատկացվել է – 70 000 դրամ
- Բուհերի տեղեկատույում տպագրվելու համար ծախսվել է - 56 000 դրամ
- Վերապատրաստման համար հատկացվել է – 40 000 դրամ
- Հաշվապահության հետ համատեղ իրականացվել է գույքագրում:

ԱՄՓՈՓՈՒՄ

2023-2024 ուսումնական տարվա Համալսարանի ստորաբաժանումների գործունեության ամփոփ կատարողականում ներառված են ԱԲՀ-ի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կատարողականների վերլուծությունը: Ստորաբաժանումների կողմից ներկայացված թվային տվյալները ներկայացված են թվով 14 գծապատկերներով, 11 աղյուսակներով և բովանդակային նկարներով:

Այսպիսով, ամփոփելով 2023-2024 ուստարում Ավանդական բժշկության Համալսարանում, ըստ գործունեության տարբեր ոլորտների, իրականացված մի շարք աշխատանքներ, կարելի է առանձնացնել և արձանագրել հետևյալը՝

- Հաշվետու ուստարում իրականացվել են աշխատանքներ, որոնք համահունչ են համալսարանի առաքելությանը, միտված են բուհի ռազմավարական գերակայություններին և ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացմանը:
- Կնքվել են երկկողմ համագործակցության մի քանի նոր պայմանագրեր ակադեմիական և ոչ ակադեմիական հաստատությունների հետ:
- Նախաձեռնվել է մասնակցություն դրամաշնորհային ծրագրերին:
- Համալսարանի միջազգայնացմանն ուղղված միջոցառումների շրջանակում կազմակերպվել են գործուղումներ արտասահմանյան ուսումնական հաստատություններ:
- Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել ժամանակակից սիմուլիաթիոն սարքավորումներ, մասնավորապես՝ մանկաբարձություն և գինեկոլոգիա, թերապևտիկ առարկաների համար:
- Բժշկակենսաբանակ, բնագիտական և վիրաբուժական առարկաների ամբիոնների համար ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր:
- Հաշվետու ժամանակահատվածում համալսրանանը բարեհաջող անցավ ինստիտուցիոնալ վերահավատարմագրում, որի արդյունքում ստացավ 4 տարվա հավատարմագրում:
- Մի շարք ձեռքբերումների հետ մեկտեղ առկա են նաև բարելավման խնդիրներ՝

- ամբողջացնել կայքի օտարալեզու էջերը, որոնք արտերկրի այցելուների, մասնավորապես օտարերկրյա պոտենցիալ դիմորդների համար առավել կարևոր նշանակություն ունեն,
- շարունակել համալսարանի էլեկտրոնային գրադարանի արդիականացման աշխատանքները,
- կազմակերպել աշխատակիցների վերապատրաստում ռազմավարական խնդիրների արդյունավետ լուծման, կրթության որակի ապահովման և բարելավման նպատակով: